

14916

891.71.02  
4-49



19 NOV 2010

Վ.ՎԵՐԱՆԴԵՎ

ՊՈՒՅԿԻՒՄ  
ԿՅԱՆՔԸ



891.71.09


4-4

ԽՄ

1937  
«ԳՐՈՅ»

14916

ՀԱՎԱՏԱ, ԸՆԿԵՐ, ԿԾԱԳԻ ՆԱ'  
ԹՈՎԻԶ ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՐԵԱԼՈՒՅՑ  
ՈՒԽԱՍՍԱՆԸ ՔԵՒՑ ԿԱՐՅՈՒԱՆԱ  
ՅԵՎ ՑԱՐԻՉՄԻ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ  
ԿԳՐԻ ՄԵՐ ԱՆՈՒՆԸ:



87

БРСМ-2



Александр Пушкин

09.08.2013

89.91.09

Վ. Վ. ՎԵՐԵՍԱՑԵՎ

Կ-49

ար.

# ՊՈՒՅԿԻՆԻ ԿՅԱՆՔԸ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1019  
42558

1837 ~ 1937

Ազատ քարգմանություն  
Հ. Բ. Դ. Դ Ա Ն Ց Ա Ն Ի

Ազով-Սևլծովյան Հայկական  
Յերկրային Հրատարակչություն «ԳՐՈՒ»  
Խոստով-Դոմ - 1937

եր: Այս Հաննիբալը հարեշական իշխողներից մեկի վորդին եր, իբրև պատաճդ՝ նա տարված ե յեղել կ. Պոլիս, այնտեղից ել բերվել ե Ռուսաստան: Պետրոս Առաջին կայսրը հրամայում ե մկրտել նրան, ուսման ե տալիս և հովանավորում ե նրան իբրև իր մերձա վորին:

Պուշկինի ծնողները համարյա բոլորովին, խնամք չեն տարել իրենց զավակների գաստիարակության վրա. նրանց գաստիարակել են Փրանսացի գաստիարակու. հիները: Պուշկինն առանձին սիրով չեր հետեւում ուս. ման առարկաներին. չեր սիրում մանավանդ մաթեմա. տիկան: Բայց դրա հակոռակ՝ չափազանց սիրում եր կարդալ: Ծածուկ մտնում եր նոր գրադարանը, ժամե ըով մնում եր այնտեղ, կարդում եր անխտիր ամեն բան, ինչ-վոր ձեռքն եր ընկնում:

Դեռ ութ տարեկան չկար, յերբ Պուշկինն սկսեց ֆրանսերեն գոտանավորներ զրել Պետք ե նկատի ունենալ, վոր մանկության հասակում Պուշկինը ֆրան. սերեն ավելի լավ եր խոսում, քան ոռուսերեն, վորով. հետեւ նրանց տանը, ինչպես և ժամանակի բոլոր աղն. վականների ընտանիքներում, խոսակցական սովորական լեզուն ֆրանսերենն եր:

Պուշկինը մի շատ կայտառ, սրախոս ու չարաճճի յերեխա յե յեղել: Ծնողները նրան չեն սիրել, ու նա յերեք ծնողական սեր և գգվանք չի ճաշակել:

1811 թվին Ցարակոյե Սելյոււմ (այժմ Դեստակոյե Սելյ) թագավորի հրամանով բացվում ե մի նոր գիշե. ըոթիկ դպրոց՝ հատկապես արտոնյալ դասի յերեխաների

համար. այդ դպրոցը կոչվում եր Ցարսկոսելսկիյ լիցեյ: Նույն 1811 թվին այդ դպրոցն ընդունվեց Պուշկինը:

Հետաքրքրական է պաշտօնական այն բնութագիրը, վոր մի տարուց հետո տալիս ե լիցեյի վարչությունը Պուշկինի մասին. Շերա ընդունակություններն ավելի փայլուն են, քան թե հիմնական. նա ավելի վառ և սուր, քան թե խոր խելքի տեր ե. ընդունակ ե այն առարկաներից, վորոնք շատ լարվածություն չեն պա. հանջում, այդ պահածուով նրա հառաջադրմությունը շատ նվազ ե: Բոլորովին աշխատասեր չե... Սըալսու. ե, բայց, տարաբախտաբար, դատարկաբանության մեջ..., թեթևամիտ ե:

Այսպես բացասական կարծիք եյին կազմել աշակերտ Պուշկինի մասին լիցեյի գասատուներն ու վերակա. ցուները: Այնինչ հայտնի յե, վոր Պուշկինն այդ ժա. մանակ արդեն չափազանց շատ եր կարդում, աշխա. տում և խորհում: Իր մի բանաստեղծության մեջ (1814 թվին) նա թվարկում ե սիրած գրողներին. կարելի յե միայն զարմանալ թե վարքան շատ գիրք ե կարգա. ցած յեղել տասնհինգամյա այդ պատանին: Հոմերոս, Վիլրդիլիոս, Զորացիոս, Տասսո, Մոլիեր, Ռասին, Վոլ. թեր, Ռուսոս, Պարնի, Դերժավին, Ֆոնվիդին, Կարամ. զին, Դմիտրին, Կրիլով — ահա սրանք են նրա սիրած հեղինակները:

Պուշկինի դասընկերներից վոմանք չեյին սիրում նրան՝ նրա կծու լեզվի համար. բայց շատերն ել խիստ սիրում եյին նրան. վերջինների թվումն եյին՝ ալպա. դեկաբրիստ Պուշկինը, ապագա բանաստեղծ Դեկինը,



Պուշկինը լիցեյի աշակերտ:

Փորագր. Յե. Հետմանի

Կյուլսելբեկերը և ուրիշները: Լիցեյի վարչության հաճողեալ նա իրեն պահում եր միանգամայն ազատ: Նա յեր պարագլուխն այն խովզությունների, վորոնք ծագեցին լիցեյում նրա գոյության առաջին տարում:

Լիցեյում հրատարակվում եյին ձեռագիր ժուրնալներ, ուր տպվում եյին աշակերտների և առաջելապես Պուշկինի բանաստեղծությունները. ընկերները հարգալից հետաքրքրությամբ հետևում եյին սկսնակ բանաստեղծի տաղանդի հարածուն զարգացմանը:



1815 թվի հունվարի 8-ին լիցեյում հրապարական քննություն եր նշանակված. քննությանը հրավիրված պատվավոր հյուրերի մեջ եր նաև ծերունի բանաստեղծ Դերֆավինը, վոր 18-րդ դարի ամենատաղանդավոր ռուս բանաստեղծներից մեկն եր. Սեղանի մոտ կանչեցին Պուշկինին: Մոտենալով սեղանին՝ Պուշկինն սկսում ե կարդալ «Հիշողություններ Ցարսկոյե Սելոյի մասին» իր բանաստեղծությունը, վոր գրված եր Դերֆավինի հայրենասիրական ներքողների վոճով: Բանաստեղծությունն առաջ բերեց ընդհանուր հըրճավանք: Դերֆավինը, արտասուզն աչքերին, փարվում ե Պուշկինին և համբուրելով նրան՝ ասում ե — Ահա թե ով ե բռնելու Դերֆավինի տեղը:

Ժամանակի ամենաականավոր գրողներն սկսեցին ավելի և ավելի ուշադրություն նվիրել Պուշկինին: Հուսալից աչքերով եյին նայում նրա վրա Կարամզինը, Բատյուշկովը, Ժուկովսկին, իշխան Վլազիմսկին: 1816 թվին Կարամզինն իշխան Վլազիմսկու և Պուշկինի հորեղբոր՝ բանաստեղծ Վասիլիյ Լվովիչի հետ

այցելեցին լիցեյը, Այստեղ Կարամզինը, կանչելով Պուշ-  
կինին, ասում է նրան—Սակառնիր արծվի պես, բայց  
թոփչքդ չդադարեցնես:

Լիցեյի բարձր կուրսերումն եղ Պուշկինը, յերբ նա  
ծանոթություն հաստատեց լիյբ-դվարդիայի հուսարա-  
կան գնդի սպաների հետ. այս գունդը բանակում եր  
ծարսկոյն Սելոյում: Դվարդիական սպաներից շատերն  
այդ ժամանակներում տարված ելին աղատամտական  
հովերով և տրամադրված ելին կառավարության դեմ.  
այս սպաների միջոցով Պուշկինը հարավորություն  
ունեցավ մոտիկ ծանոթանալ անլեզալ զրականության  
հետ:

Սպաներից մեկը՝ հետագայում նշան սվոր Պ. Յա-  
շապայեվը շատ մեծ ազդեցություն ունեցավ Պուշկինի  
վրա: Իբրև հեղափոխական հովերով տարված մարդ՝  
Զատայեվը խոշոր դեր խաղաց Պուշկինի քաղաքական  
գաստիարակության և ընդհանրապես նրա մտավոր  
զարգացման ձևակերպման մեջ:



Ա. Պուշկին մասնի տարրեկողն հանդիսանում է իր բանաստեղծությունը  
ինքը այս պահին բարձարացնելու թագավորական արժանականությունը:

Նկար 1. Ռետրոմիք

1817 թվին Պուշկինն ավարտեց լիդեն ու ծառայության մտավ Պետերբուրգում, արտաքին գործերի պետական կողեգիայում, տարեկան 700 ո. ոռձիկով Պուշկինի, ինչպես և ժամանակի յերիտասարդ ազնվականների ծառայությունն իսկապես միայն անվանական եր, ձևական, նրանք համարյա վոչինչ չեյին անում. յերբեմնապես միայն յերեում եյին իրենց պաշտոնատեղում՝ սահմանյալ չիներն (աստիճանները) ստանալու համար։ Հետեւաբար Պուշկինն ազատ ժամանակ շատ ունի:

Ծնողները նույնպես Պետերբուրդ եյին փոխադրվել, Պուշկինը ծնողների հետ ապրում եր Ֆոնտանկա կոչվող փողոցում, Կալինկինի կամրջի մոտ։ Պուշկինի ստացած չնչին ոռձիկը շատ անբավարար եր ծածկելու համար այն ծախսերը, վորոնք անհրաժեշտաբար կապված եյին Պուշկինի բարձր շրջաններում մշտական յելումուտք ունենալուն հետո իսկ ծնողների գործերն, ինչպես և միշտ, խանգարված եյին. դրան հարկավոր ե ավելացնել նաև հոր գծուծ ժլատությունը։

Պուշկինը գլխովին նետվեց Պետերբուրգի յեռուն կյանքը: Պարում եր պարահանդեսներում, սիրահարվում եր ու խմում: Բայց խմում եր ավելի տղամարդություն ցույց տալու համար, խմում եր ուրիշներից հետ չմնալու կամ նրանց գերազանցելու համար: Հենց այդ տղամարդություն անելու պատճառով ել Պուշկինը պահում եր իրեն հանդուգն յեղանակով: Որինակ, թատրոնում նա, Ոնեգինի պես «աթոռների շարքերով անցնելիս, վոտքերը կոխոտելով» եր գնում, կամ կանգնելով բազկաթոռների միջև, նստած հանդիսականների առջև, կոպիտ պատասխաններ եր տալիս, յերբ նրան ինդրում եյին մի կողմքաշիլեր: Այն մի դատարկ բանի համար մենամարտի յեր հրավիրում. սակայն ընկեր. ներին հաջողվում եր այդ մենամարտերի մեծ մասի առաջն առնելի Միաժամանակ նա ամբողջ յերեկոներ եր անցկացնում Պետերբուրգ տեղափոխված Զապահեր հետ և զրոյցներ եր ունենում ամենալուրջ թիմաների շուրջը և կամ Կարամզինի տանը ամենքին զարժացնում եր իր խելքով և զարգացումով:

Զամանալի յեր, թե յերբ եր նա կաւողանում գրել: Իսկ գրում եր շատ: Մեկը մյուսի հետեկից վերջացրեց «Ռուսան և Լյուդմիլայի» գլուխները, գրեց բազմաթիվ լիրիկական բանաստեղծություններ: Նրանից հասակավոր զրոյները հիացմունքով եյին հետեւմ նրա տաղանդի արագ աճմանը: Ֆուկովսկին, որինակ, գրում եր իշխան Վյալեմսկուն: «Սքանչելի» տաղանդ ե. ի՞նչ բանաստեղծություններ են: Իր ձիքով նա ինձ տանցում ե վորպես ուրվական»...

1820 թվի մարտին Պուշկինը վերջացրեց հայտնի «Ռուսան և Լյուդմիլայ»: Այս պոեմի պատկերների գեղարվեստականությունը, բնութագրերի վառ գույները, զրության պարզ վոճը, անսիթեեթ լեզուն և վերջապես նրբագեղ, անընազբախիկ տաղաչափությունը — այդ բոլորը մի կատարյալ նորույթ եր ուսական պոեզիայի համար: Յերբ Պուշկինը վերջացրեց իր այս պոեմը, ժուկովսկին նվիրեց նրան իր նկարը հետեւյալ մակագրությամբ. «Հաղթող աշակերտին, հաղթված ուսուցչից»: Այս ժամանակից ահա սկսվում է Պուշկինի՝ վորպես առաջնակարգ պոետի հոչակելը:

Իսկ ի՞նչ եր ներկայացնում այդ ժամանակ Ալիք-սանդը լ-ի Ռուսաստանը: Կառավարության գլուխը ամկանգնած եր Արաքչեևը, մի մարդ, վոր ուխտել եր ամբողջ յերկեւը զրոանոցի վերածել: Անընդհատ պատերազմների հետեւանքով յերկերն իսպատ քայլայվել ու աղքատացել եր: Մյուս կողմից ել՝ արտասահմանի և հատկապես ֆրանսական արշավանքներին մասնակցած ուսանելը առիթ եյին ունեցել ականատես լինելու արևմտյան Ցեվրոպայի համեմատաբար ավելի ազատ քաղաքական վարչաձևեն: Այս բոլորի հետեւանքով որպատկան գաղամական և անհամերատար վերաբերունք դեպի կառավարությունը: Լիբերալ ազնվականության շրջաններում առաջանում եյին գաղանի ընկերակցություններ, վորոնց նպատակն եր վորոշ սահման գնել միահեծան ինքնակալությանը: Այս ոպողիցիոն տրամադրությունը չեր կարող արձագանք չգտնել Պուշկինի զգայուն սրտում:

Եպիգրամ եպիզրամի հետեւից գրեց այդ ժամանակ  
Պուշկինն Ալեքսանդրի ու նրա բարձրաստիճան խոր-  
հըրդականների մասին: Իր մի բանաստեղծության մեջ  
(«Ազատության ներբողը»), դառնալով թագակիրներին,  
վրոնք իրենց իշխանությունը համարում են «վողոր-  
մությամբն աստուծո», Պուշկինն ասում ե.

Ձեզ պսակ ու գահ, ովք դուք սիրողներ,  
Որենքն ե տալիս յեվ փոչ բնուրյուն.  
Ժողովրդից, այո՛, կանգնած եք դուք վեր,  
Բայց ձեզնից ել վեր որենքն ե կանգնած:

«Գյուղ» բանաստեղծության մեջ նա վառ գույնե-  
րով պատկերում ե ճորտ գյուղացիության դրությունը:  
Իր մտերիմ բարեկամ Զաադակին ուղղած բանաստեղ-  
ծության մեջ Պուշկինը գրում ե.

Հավատա, ընկեր, կծագի նա՝  
Թուվիչ յերջանկուրյան արշալույսը.  
Ռուօսատանը բնից կարքնանա  
Յեվ ցարիզմի բեկորների վրա  
Կգրի մեր անունը:


Այս բանաստեղծությունների ձեռագիր որինակ-  
ները ձեռքե-ձեռք անցնելով տարածվում ելին Ռու-  
սաստանի նույնիսկ ամենահեռավոր անկյուններում:  
Բանաստեղծի այս հարձակողական և մերկացուցիչ  
դրվագները բնականաբար պետք ե ընկնեյին նաև  
կառավարության ձեռքը: Պետերբուրգի զինվորական  
գեներալնահանգամբ կոմս Միլորադովիչն իր մատ ե

կանչում Պուշկինին ու նրա ներկայությամբ հրամա-  
յում և վոստիկանապետին գնալ և խուզարկություն  
կատարել Պուշկինի բնակարանում: Այս վերջինը դառ  
նում և Միլորադովիչն և անվլրդով ասում.

— Կնմս, այն, ինչ-վոր դուք փնտռում եք, այստեղ  
չեք գտնի. լավ ե կարգագրեք, վոր բերեն թուղթ ու  
գրիչ, և յես այն բոլորը նորից կզրեմ հենց այստեղ:

Այս ասելով նաև ու զրի անցրեց իր բոլոր  
անկեցալ վոտանավորները: Ճարը վորոշեց աքսորել  
ըմբոստ բանաստեղծին Սիբիր կամ Սոլովկի: Կարամ-  
զինի և Ժուկովսկու ազդու միջնորդությամբ այս պա-  
տիժը մեղմակեց. 1820 թվի մայիսի 6-ին յերիտասարդ  
Պուշկինին Պետերբուրգից աքսորեցին Յեկատերինոս-  
լավ (այսորվա Դնեպրոպետրովսկ): զեներալ հնգովի  
մոտ ծառայելու պաշտոնով: 1820 թվի մայիսի 6-ին  
Պուշկինը մեկնեց Պետերբուրգից:





«Մնաք բարով, դուք աղատ տարերք»,  
Նկար Այվազովսկու յնի Ռետիթի:

Հայտնի զորապետ՝ գեներալ Ռաևսկին, Պետերբուրց  
գից կովկասի հանքային ջրերն ուղևորվելիս, հասավ  
Յեկատերինոսուլավ, ուր մնաց միքանի որ հանգստանա-  
լու։ Նրան ուղեկցում եյին Նիկոլայ վորդին ու յերկու  
դեռահաս աղջիկները։ Այս Նիկոլայը Պուշկինի վաղեմի  
բարեկամն եր ու գիտեր, ինարկե, վոր իր մտերիմը  
Յեկատերինոսուլավ և աքսորված։ Վորոշեց անպատճառ  
տեսնել նրան։ Տերկար հարցումիրձից հետո Նիկոլայ  
Ռաևսկին իր բարեկամին գտավ մի հըեայի վողորմելի  
խրճիթում, քաղաքի հեռավոր ծայրում։ Մալարիայով  
ճիվանդ Պուշկինը պառկած եր փայտե մի նստարանի  
վրա վողորմելի կերպարանքով՝ չսափրված, դժգույն  
ու լզար գեմքով։

Գեներալ Ինգովի թույլտվությամբ Ռաևսկիներն  
իրենց հետ կովկաս տարան նաև ճիվանդ Պուշկինին։  
Այդ ամառ Պուշկինը Ռաևսկիների հետ անցկացրեց  
հանքային ջրերում, իսկ ուղստոսին, նույն Ռաևսկի-  
ների հետ, ուղեկորդեց Դրիմ և յերեք շաբաթ մնաց  
Գուրզուֆում, — յերեք յերջանիկ շաբաթ, վորոնք մնա-

ցին Պուշկինի հիշողության մեջ նրա կյանքի ամելով՝  
ընթացքում:

Սեպտեմբեր ամսին Պուշկինը Գուրզուֆից մեկնեց  
ուղղակի Քիշնև (Բեսարարիայում), վորովհետև գենե-  
րալ Ինդովի գրասենյակը Յեկատերինոսլավից այլտեղ  
եր փոխադրվել: Ճանապարհին նա նորից տեսնդով հի-  
վանդացավ. բոլորովին հիվանդ՝ նա գնաց Բախչիսարայ,  
դիտեց խանի պալատն իր «արքունքի շատրվանով» ու  
սեպտեմբերի 21-ին հասավ Քիշնև:

Քիշնևում գտնվում եր Հարավային բանակի դիվի-  
զիաներից մեկի շտաբը: Դիվիզիայի հրամանատարն եր  
Միխա. Ֆյոդ. Ուլովը՝ գաղտնի «Բարզության միության»  
անդամը: Սա եր գնդերում, զինվորների համար, մտցրել  
եր կրթական այսպես կոչված լանկաստերյան դպրոց-  
ներ և յեռանդուն կերպով պայքարում եր մարմնական  
պատիժների դեմ: Պուշկինի գալուց հետո շատ չան-  
ցած՝ նա ամուսնացավ զեներալ Ռամսկու մեծ աղջկա՝  
Յեկատերինա Նիկոլաևնայի հետ, վորը, Պուշկինի  
կարծիքով, «արտասովոր կին եր»: Պուշկինն Ուլովների  
մոտ ընդունվում եր իրեւ տան մարդ: Այստեղ նա  
ծանոթացավ Ուլովի զիվիզիայի սպաների հետ: Նրանց  
մեջ քիչ չեյին խելացի և տաղանդավոր մարդիկ:

«Բարզության միությունը» յերկու բաժին ուներ:  
Մեկի կենտրոնը Պետերբուրգում եր, մյուսինը հարա-  
գում՝ Տուլչինոյում, ուր գտնվում եր Հարավային բա-  
նակի գլխավոր շտաբը: Պետերբուրգիները կրնստի-  
տուցիա ելին ուղում՝ ազնվականական իրավունքների  
և կալվածատիրական հողատիրության պահպանումվ:



Ավելի ռադիկալ հարավացիները՝ վորպես նպատակ՝  
առաջադրել եյին զեմոկըատական հանրապետություն՝  
ազնվականական արտոնությունների լիակատար վե-  
րացումով և բոլոր քաղաքացիների քաղաքական  
իրավունքների հավասարեցումով։

Հարավցիների գլուխ կանգնած եր գնդապետ Պիո-  
տելը՝ Պուշկինը սրա հետ հանդիպում եր Քիշնեում,  
յերբ Պեստելը յերբեմն զալիս եր այնտեղ։ 1821 թվի  
ապրիլի 9-ին Պուշկինն իր որագրում գրել ե. «Առա-  
վոտն անցկացրի Պեստելի հետ... Նա իմ ճանաչած  
մարդկանցից ամենաորիգինալ մտածողներից մեկն ե»։

Քիշներից Պուշկինը միքանի անգամ հյուր գնաց  
Կիևի նահանգի Կամենկա գյուղը, վոր մի հարուստ  
կալվածք եր և պատկանում եր գեներալ Ռասենկու մորը։  
Կամենկայում ապրում եր սրա վորդին յերկրորդ ամուս-  
նությունից՝ Վասիլիյ Լվովիչ Դավիդովը, վոր Հարա-  
վային ընկերության գործունյա անդամներից մեկն եր։  
Ամեն տարի նոյեմբերի վերջում, նրա մոր անվանակո-  
չությունը տոնելու պատրվակով, Կամենկա եյին հա-  
վաքվում գաղտնի ընկերության անդամները՝ խորհր-  
դակցության համար։ Այդպիսի համագումարներից մեկին  
պատահաբար ներկա յեղավ Պուշկինը, այստեղ նա վե-  
րանորոգեց իր ծանոթությունը ի. Դ. Յակուշկինի հետ,  
վորին արդեն հանդիպել եր Պետերբուրգում։ Յակուշ-  
կինը նույնպես այս ընկերության ամենագործունյա  
անդամն եր։

Հեղափոխության այն ժամանակա այդ բոլոր նշա-  
նավոր գործիչների հետ հաղորդակից լինելը մեծ աղ-

դեցություն ունեցավ Պուշկինի քաղաքական գարգացաման վրա։ Նրա ոպոզիցիոն տրամադրություններն ամրանում եյին։ Դրան նպաստում եյին նաև Յելրոպայում տեղի ունեցած իրադարձությունները։ Հեղափոխությունը բռնկվել եր Իսլանիայում, Նեապոլում։ Հունաստան ապստամբել եր Թուրքիայի դեմ։ Պուշկինը հիմունքով հետեւում եր հունական ապստամբության ընթացքին, յերազում եր անձամբ մասնակցել նրան։

Յերեք Պուշկինն այնքան հեղափոխականորեն տրամադրված չեր յեղել, վորքան այդ ժամանակ։

Քիչնեւում Պուշկինը գրում ե «Դաշույն» հեղափոխական բանաստեղծությունը։ Նույն ժամանակ նա գրում ե մի կծու հպիգրամ Ալեքսանդր 1-ի հասցեյին—«Թմբկահարության տակ լաստիարակվածը» վերնագրով։ Պուշկինը նախագծում ե մի գրամա, ուր ազնվականը թղթախաղում տարվում ե իր վաղեմի, հավատարիմ ծառան։ Պոեմն սկսում ե մեծ նովորոդի ազատության համար կովող առաստեղլական մարտիկ վասդիմի մասին։ Իր քաղաքական տրամադրություններն արտահայտելիս Պուշկինը, ինչպիս և Պետերբուրգում, վոչ մի զգուշություն չեր բանեցնում։ Դադանի վոստիկանության գործակալները գրում եյին Պետերբուրգ։ «Պուշկինը հրապարակով և նույնիսկ սրճարաններում հայուցում ե վոչ միայն զինվորական իշխանությանը, այլև կառավարությանը»։

Իր հայացքներով ու տրամադրություններով Պուշկինը սերտորեն հարգած եր գաղտնի ընկերությանը, բայց նրան անդամ չեր։ Հեղափոխական շարժման պատ-

մության մեջ մտած գավաղիբներից վոչ մեկը, ինչպիս գեկարիստաները, իրենց գաղտնիքը Պուշկինին չեյին հայտնում, նրանք մի կողմից վախենում եյին, վոր նա վեճի տաք ժամանակի կարող և բերնից խոսք թոցնել։ Մյուս կողմից՝ նրան պահպանում եյին վորպես խոշորագույն տաղանդի։ Նրանք հասկանում եյին, վոր Պուշկինն իր գըչով բավականաչափ աշխատում ե իրենց նպատակների համար։

Պետերբուրգի մուերիմերի ջանքով Պուշկինը, առաքին գործերի մինիստրի կարգադրությամբ, փոխադրվեց Ողեսսա, վորի գեներալնահանգապետն եր կոմս Մ. Ս. Վորոնցովը։ Սա, վոր Յելրոպայում մեծացած ու զաստիարակված մարդ եր, խոստացել եր հովանավորել յերիտասարդ բանաստեղծին ու նրա տաղանդի գրագացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել։

Պուշկինի նյութական վիճակը գոհացուցիչ չեր։ Նա համարվում եր Վորոնցովի գրասենյակի պաշտոնյա, ամսական 58 ռուբլի ոռճիկով, վոր, բնականարար, փոքրիշտակ մարդավայել կյանքի համար բավական չեր։ Ազնվականների միջավայրում, վորին պատկ սնում եր նաև Պուշկինը, գրական վաստակների համար փող ստանալն անպատիվ բան եր համարվում։ Դա նշանակում էր «վաճառքի հանել յերկնային շնորհքը»։ Պուշկինը միանգամայն դիմ գնաց այս աղայական նախապաշարմունքին։ Նա ասում եր. «Ծնորհքը չի վաճառվում. վաճառել կարելի յե ձեռագիրը»։

Այս ժամանակաշրջանում Պուշկինը միանգամայն ապարագած եր Բայրոնով։ Այս գերջինի աղջեցությամբ

Կրված են «Կովկասյ ան գերին», «Բախչիսարայի շատըր-վանը», «Յեղբայրներ՝ ավազակներ» պղեմները: Այս պոհմները վոր գրված են սքանչելի տաղաջափությամբ, և սմակված են հրաշալի գեղարվեստական պատկերներով, շատ մեծ հաշողություն ունեյին: Հասարակությունը բերան եր անում այս պղեմները. Պուշկինի ժողովրդականությունը որեցոր անում եր, Այստեղ, Ողեսայում, Պուշկինն սկսեց գրել իր նշանավորագույն յերկերից մեկը՝ «Յեղքենիյ Ռնեգինը»:

Թեև այն ժամանակվա ոռուս մեծավորների մեջ Վորոնցովը աչքի յեր ընկնում վորպես կուլտուրականք յեռանդուն և բանիմաց պաշտոնյա, բայց միաժամանակ նա շատ յեսամոլ չոր, ինտրիկան ու նենդամիտ մարդ եր, լինելով բժախնդիր և ինքնահավան իշխանավոր, նա սիրում եր, վոր ստորագրյալները շողոքորթեն, ստորագրաբշություններ անեն իր առաջ: Թեև Պուշկինը նրա գրասենյակի ստորին պաշտոնյաներից եր, բայց իրեն պահում եր միանդամայն անկախ, քծնել ու շողոքորթել չգիտեր: Այս եր պատճառը, վոր Վորոնցովը հետզհետե սկսեց վարվել Պուշկինի հետ ավելի սառնությամբ և մեծամությամբ:

1824 թվի մայիսին Վորոնցովը պաշտոնապես առաջադրում է Պուշկինին մեկնել գավառները՝ տեղեկություն հավաքելու բերեան յեկած մորեխի ու նրա վերացման համար գործ գրված միջոցառությունների մասին: Իշխանավորի այս առաջադրանքը Պուշկինին միանդամայն կատաղեցրեց. հասկանալի յեր, վոր Վորոնցովը նրան պարզապես ուղում է ովտագործել վորպես գրասե-

նյակային սոսկական աստիճանավորի: Պուշկինը վճռեց հրաժարվել այս գործուղումից, բայց մտերիմները համոզեցին նրան հետ կենալ այդ քայլից: Պուշկինը մեկնեց գովառ, վերադառնալուց հետո, ինչպես պատմում ելին, նա մի այսպիսի ուապորտ է ներկայացրել Վորոնցովին.

Մորեխը բռավ, բռավ

Ու նստավ.

Նայեց չորս կողմը, ամենը կերավ  
Ու նորից բռավ:


Այս միջադեպից հետո Պուշկինը, հրաժարական տալով, հեռանում է պաշտոնից և վճռում է ապրել գրական աշխատանքով:

Աքսորականի կաշկանդված վիճակը, Վորոնցովի հայածանքը, գրաքննչական անձուկ պայմանները չափազանց հուզում ելին բանաստեղծին, և նա վճռեց փախչել Ռուսաստանից ու անցնել կ. Պոլիս: Բարեկամներից վոմանք ողնում ելին նրան այս նպատակը հաջողեց նելու համար: Բայց փախուստը զլուխ չեկավ:

Վորոնցովը, ի հարկե, չեր քնած. նա անվերջ կեկուցումներ եր ներկայացնում Պետերբուրգ Պուշկինի ժաման: նա հավաստիացնում եր կառավարությանը, վոր Ողեսսայի հասարակությունը չափազանց վտանգավոր է Պուշկինի համար, վոր այդ հասարակությունը կարող է վարակել նրան «մոլորություններով և վտանգավոր գաղափարներով». վոր լավագույն կլիներ հեռու պահել Պուշկինին նրա յերկրպագուների քծնանքից, վորովհետեւ այդ յերկրպագուները զիմանան են անում

Նրան, ներշնչելով, թե նա նշանավոր գրող ե, «մինչդեռ  
նա հանդիսանում ե թույլ ընդորինակողը մի զրողի,  
այսինքն լորդ Բայրոնի, վորի մասին շատ քիչ բան  
կարելի յե ասել»:

Պուշկինի գլխին սև ամպել ելին կուտակվում: Մոսկ-  
վայի վոստիկանության ձեռքն եր ընկել Պուշկինի մի  
նամակը, գրված իր բարեկամներից սեկին. հիշյալ նա-  
մակում բանաստեղծն արտահայտվում ե այն իմաստով,  
վոր ինչպես աստծու գոյության, այնպես ել հոգու  
անմահության վերաբերված փաստարկումները համո-  
գեցուցիչ չեն: Մոսկվայից կարգադրություն ե գալիս,  
վորպեսզի Պուշկինին աքսորեն Պսկովի նահանգը՝ ծնող-  
ների կալվածքը: Այս կարգադրությունը սիանգամայն  
շամեցրեց Պուշկինին: Բայց հրամանը պետք ե կատար.  
վեր. 1824 թ. հունիսի 30-ին Ռդեսսայի քաղաքապետը  
ճամբու դրեց Պուշկինին Պսկովի նահանգը:



## ՄԻԽԱՅԼՈՎՍԿՈՅԵՅՈՒՄ

Ճանապարհին վոչ մի տեղ կանգ չառնելով, Պուշկինը  
ոգուստոսի 9-ին հասավ իր ծնողների կալվածքը՝ Մէ-  
խայլովսկոյե գյուղը:

Համարյա յերկու տարի նա մնաց այստեղ իրեւ  
միայնակյաց իր պառավ դայակի՝ Սրինա Ռոդիոնով-  
նա ի հետ: Ամեն առավոտ նա ընդունում եր սառը  
վաննա և ապա նստում եր աշխատելու. ճաշում եր ուշ.  
Ճաշից հետո նստում եր ձին և զբոսանքի գնում. յե-  
րեկոները ձանձրույթից ինքն իր հետ բիւթարդ եր  
խաղում կամ լսում եր դայակի սքանչելի հեցյաթները.  
«Ի՞նչ հրաշալի հեցյաթներ են դըանք», — հիացմաւնքով  
գրում եր Պուշկինը բարեկամներին. — Այս հեցյաթնե-  
րից յուրաքանչյուրը մի-մի պոեմ ե... Դայակս — Տատ-  
յանայի դայակի նախատիպն ե. նա իմ յեղակի ընկերն  
ե. նրան հետ ե միայն, վոր յիս ձանձրույթ չեմ զգում»:


Տոն որերին Պուշկինը յերբեմն հազնում եր ոռո-  
սական կարմրագույն վերնաշապիկը և վոտքով զնում  
եր մոտակա վանքը. այստեղ նա մոտենում եր կույր

աղքատներին, նստում նրանց կողքին և ուշադրությամբ ականջ եր դնում նրանց յերգելին:

Հարևան կալվածատերերի հետ Պուշկինը գնալու գալ չուներ, բացի Տրիգորսկ գյուղի կալվածատիրուէի Ոսիրպովայից, վորի տանը հաճախակի լինում եր նաև Այս Ոսիրպովան կրթված և արդեն տարիքն առած կին եր Յերիտասարդ բանաստեղծը շատ սիրեց այս կնոջն ու մինչև կյանքի վերջը շարունակում եր պահպանել նրա հետ իր բարեկամական կապերը:

Զանձրույթն ու թախիծը խիստ մաշում եյին Պուշկինին, Միխայլովսկիոյն գյուղից գրած նամակներում Պուշկինը գանգատվում եր՝ «Թախիծը պատել և սիրու, գլուխս չի բանում»: Նա չափազանց չարացած եր կառավարության վրա, վորովհետեւ՝ անդադրում հալածանքների հետեւանքով՝ նա անկարող եր հանգիստ սրտով աշխատել և առաջ տանել իր գրական գործերը: Յեզ նորից Պուշկինի առաջ, վորպես գրությունից գուրօգալու միակ յելք, ուրվագծվում եր փախուստը դեպի արտասահման: Սակայն փորձը դարձյալ չհաջողվեց:

1825 թ. հունվարին Պուշկինին այցելության յեկավ նրա լիցեյի ընկեր Իվան Իվանովիչ Պուչչինը: Շատ հուզակից յեղավ նրանց այս տեսակցությունը: Պուշչինն իր ընկերոջն իրու նվեր բերել եւ Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը», վորի ձեռագիր որինակն այդ ժամանակ ձեռքից ձեռք եր անցնում: Ճաշից հետո նրանք կարդացին «Խելքից պատուհասը» և յերկար ու սրտաբաց խոսեցին: Պուչչինը Հյուսիսային գաղտնի ընկերության գործունյա անդամներից մեկն եր. մինչև



Ա. Ս. Պուչչինը և ի. ի. Պուչչինը Միխայլովսկու կողուում

Վորի վրա սիրով աշխատում եր յերկար ժամանակ. դա «Բորիս Գոդունով» պատմական տրագեդիան եր թատրոնը մի կերպ բավականանուած եր «ոռուս Ռասինների գործերով» — Քրանսական կեղծ կլասիկական նորուշների փքուն ընդորինակումներով, վորոնք զեղարգեստուկան վոչ մի արժեք չունեին: Պուշկինը նպատակ դրեց իրեն՝ թատրոնը շուր տալ դեպի Շեքսպիրի հարթած ուղին: «Հաստատապես հավատացած լինելով, — զրուժ եր նա, — վոր մեր թատրոնի հնացած ձեւը վերափոխում են պահանջում, յես իմ տրագեդիան դասավորեցի մեր հոր՝ Շեքսպիրի սիստեմով... Երան ընդորինակեցի յես՝ խարակտերներն ազատուեն ու լայն կերպով պատկերելու, տիպերն արտասովոր յեղանակով կազմավորելու և պարզություն մտցնելու մեջ... Յես հաստատապես հավատացած եմ, վոր մեր թատրոնի համար պատշաճ են Շեքսպիրի դրամաների ժողովրդական որենքները և վոչ թե Ռասինի տրագեդիաների պալատական սովորութները: Դարի վորին մեծամեծ փոփոխություններ և պահանջում նաև դրամատիկական ընթացում»:

1825 թվի աշնանը Պուշկինն ավարտեց իր «Բորիս Գոդունովը»: Ինքն իրեն կարդաց ձայնով, ծափ ավեց ու խանդավառ բացականչեց՝ «Ա՛յ դու Պուշկին! Ա՛յ դու ջան վորդի»:

Միխայլովսկոյե գյուղում Պուշկինը շարունակեց գրել «Ուեգինը», վոր Ռեսայում եղականի: Կերջացրեց՝ յերբուրդ գլուխը, գրեց չորրորդ և հինգերորդ գլուխները:

1825 թվի գեկտեմբերի կեսերին, յերկու առավոտ նվիրելով, գրեց «Կոմա Նուլին» պոեմը:

1825 թ. նոյեմբերի 19-ին (հ. տոմ.) հանկարծամահ յեղավ Ալեքսանդր 1-ը. թագաժառանգ համարվում եր նրա յեղբայր կոնստանտինը, բայց սա վաղուց արդեն հրաժարվել եր իր իրավունքից, թեև այս հանգամանքը կաղտնի յեր պահպում: Հետեաբար գահը պիտի ժառանգեր յուս յեղբայր նիկոլայը: Զորքը նախ յերդում տվեց կոնստանտինին, ինքը նիկոլայն ել յերդում տվեց նրան. իսկ ապա արդեն յերդում տվին՝ նիկոլային: Դապանի ընկերության անդամները կամեցան ոգտվել ստեղծված խառնաշփոթ գրությունից և զինվորական հեղաշրջման միջոցով կամ իսպառ վերացնել ինքնակալությունը կամ սահմանափակել այն նրանք ներշնչեցին զորքին, վոր կոնստանտինն իսկապես բռնի յեղանկեց արված, և գեկտեմբերի 14-ին զորքն ապստամբեց նիկոլայի դեմ, սակայն նիկոլայի թնդանոթները ջախջախեցին ապստամբներին:

Փահակալի փոխվելու հետեւանքով Պուշկինը համակվեց վառ հույսերով. նա վորոշեց միջնորդություն հարուցել իր ազատագրաման մասին. բայց նման միջնորդության համար ժամանակը շատ աննպաստ եր: Ճիշտ է, ինքը Պուշկինը կաղտնի ընկերության անդամ չերբայց պետք ե ասել, վոր համարյա բոլոր ձերբակալվածների մոտ գտնում երին նրա հեղափոխական վոտանավորները: Այս տվյալների հիման վրա կառավարության համար միանգամայն պարզ եր, վոր ապստամբության նախապատրաստման գործում նշանավոր

ազիտացիոն դեր են խաղացել Պուշկինի բանաստեղծությունները:

Յեվ Պուշկինի հարուցած միջնորդությունը մնաց անպատճախան: Դեկաբրիստներից հինգը կախաղան հանվեցին, հարյուրից ավելին Սիբիր աքսորվեցին՝ տաժանակիր աշխատանքի: Կախաղան հանվածներից շատի հետ Պուշկինը ծանոթ եր, իսկ Սիբիր աքսորվածներից շատնրին անձամբ եր ճանաչում: Դատավարության այս արդյունքը նրա վրա սոսկալի տպավորություն գործեց: «Կախաղան հանվածները կախաղանվերջացած են, — գրում եր նա, — բայց 120 բարեկամների, յեղբայրների, ընկերների տաժանակիր աքսորը — դա սարսափելի»: Դեռ շատ հետո Պուշկինը իր սկազարությունների մեջ նկարում եր կախաղան, վորի վրա կախաղան հետ հինգ դիմու:

1826 թվի սեպտ. 3-ին Պուշկինը, ժամանցի համար, հարևան Տրիգորսկ գյուղն եր գնացել, հրաշալի յերկոյնը: Պուշկինը, շատ ուրախ տրամադրված, զբոսնում եր որիորդների հետ. Ժամը 11-ին ճանապարհ գրին նրան դեպի տուն: Լուսաբացին Տրիգորսկ վաղեց Պուշկինի պառավ դայակը՝ Արինա Ռոդիոնովսան՝ հալից բոլորովին ընկած, սարսափանար և արտասուրքից խեղդվելով: Պառավը հաղորդեց, վոր գիշերս գյուղ և յեկել մի անժանոթ սպա կամ վիճվոր ու Պուշկինին տարել ե իր հետ:

Պարզվեց, վոր հատուկ ֆելլենգերի ուղեկցությամբ Պուշկինին սրարշավ տարել են Մոսկվա իշխանության կարգադրությամբ: Սեպտեմբերի 8-ին Մոսկվա

հասնելով, Պուշկինը տարվում և անմիջապես պալատ, Նիկոլայի առանձնասենյակը:

Կայսրը Պուշկինին ընդունում և շատ վողորմածաբար: Նրանց խոսակցությունը տեսում է յերկար: Ցարը հարց է տալիս. — Պուշկին, յեթե դու Պետերբուրգում լինեյիր, դեկտեմբերի 14-ի ցույցին կմասնակցելո՞ր, թե վոչ:

Պուշկինը համարձակ պատասխանում է. — Անպատճառ, տեր իմ: Դավագիրները բոլորն իմ բարեկամներն են, յես չեյի կարող դավագրությանը չմասնակցել: Իմ բացակայությունն եր, վոր փրկեց ինձ:

Նիկոլայը հարցնում է՝ վոխվել և արդյոք ներկայում նրա մտածելակերպը, և, յեթե նրան ազատություն չնորդվի, խոսք տալիքս և այսուհետեւ մտածել ու գործել այլ կերպ....

Ապա թագավորը հարցնում է.

— Այժմ ինչ ես գրում:

— Համարյա վոչինչ, չափազանց խիստ և գրաքըննությունը:

— Ինչու այնպիսի բաներ ես գրում, վորոնք գրաքննիչը բաց չի թողնում:

— Դրաքննիչը բաց չիթողնում նույնիսկ ամենաանմեղ բաները:

— Դե լավ, վոր այդպիս ե, այսուհետեւ յես ինքու կիենեմ քո գրաքննիչը: Ինչ վոր գրես, ինձ կուզարկես:

Կայսրը Պուշկինին թևանցուկ դուրս յեկավ առանձնասենյակից ու դարձավ գուան մոտ խոնված պալատականներին.

ազիտացիոն գեր են խաղացել Պուշկինի բանաստեղծությունները:

Յեզ Պուշկինի հարուցած միջնորդությունը մնաց անպատճան: Դեկաբրիստներից հինգը կախաղան հանվեցին, հարյուրից ավելին Սիբիր աքսորվեցին՝ տաժանակիր աշխատանքի: Կախաղան հանվածներից շատի հետ Պուշկինը ծանոթ եր, իսկ Սիբիր աքսորվածներից շատներին անձամբ եր ճանաչում: Դատավարության այս արդյունքը նրա վրա սոսկալի տպավորություն գործեց, «Կախաղան հանվածները կախածավերջացած են», — գրում եր նա, — բայց 120 բարեկամների, յեզբայրների, ընկերների տաժանակիր աքսորը — դա սարսափելի յետ: Դեռ շատ հետո Պուշկինը իր սևագրությունների մեջ նկարում եր կախաղան, վորի վրա կախած են հինգ դիակ:

1826 թվի սեպտ. 3-ին Պուշկինը, ժամանցի համար, հարեան Տրիգորսկ գյուղն եր գնացել հրաշալի յերեկո յեր: Պուշկինը, շատ ուրախ տրամադրված, զբունում եր որիորդների հետ. ժամը 11-ին ճանապարհ զբին նրան դեպի տուն: Լուսաբացին Տրիգորսկ վաղեց Պուշկինի պառավ դայակը՝ Արինա Ռոդիոնովան՝ հալից բոլորովին ընկած, սարսափահար և արտասուքից խիղդվելով: Պառավը հաղորդեց, վոր գիշերս գյուղ ե յեկել մի անձանոթ սպա կամ զինվոր ու Պուշկինին տարել ե իր հետ:

Պարզվեց, վոր հատուկ ֆելյեգերի ուղեկցությամբ Պուշկինին սրարշավ տարել են Մոսկվա իշխանության կարգադրությամբ: Մեպտեմբերի 8-ին Մոսկվա

համակալով, Պուշկինը տարվում ե անմիջապես պալատ, Նիկոլայի առանձնամենյակը:

Կայսրը Պուշկինին ընդունում ե շատ վողորմածաւը: Նրանց խոսակցությունը տևում ե յերկար: Յարը հարց ե տալիս. — Պուշկին, յեթե դու Պետերբուրգում լինեյիր, դեկտեմբերի 14-ի ցույցին կմասնակցելի՞ր, թե վոչ:

Պուշկինը համարձակ պատասխանում ե. — Անպատճառ, տեր իմ: Դավագիրները բոլորն իմ բարեկամներն են, յես չեյի կարող դավադրությանը չմասնակցել: Իմ բացակայությունն եր, վոր փրկեց ինձ:

Նիկոլայը հարցնում ե՝ փոխվել ե արդյոք ներկայում նրա մտածելակիրպը: Կ, յեթե նրան ազատություն շնորհվի, խոսք տալիս ե այսուհետև մտածել ու գործել այլ կերպ....

Ապա թագավորը հարցնում ե.

— Այժմ ինչ ես գրում:

— Համարյա վոչինչ, չափաղանց խիստ ե գրաքըննությունը:

— Ինչու այնպիսի բաներ ես գրում, վորոնք գրաքննիչը բաց չի թողնում:


— Գրաքննիչը բաց չի թողնում նույնիսկ ամենաանմեղ բաները:

— Դե լավ, վոր այդպիս ե, այսուհետև յես ինքու կլինեմ քո գրաքննիչը: Ինչ վոր գրես, ինձ կուղարկես:

Կայսրը Պուշկինին թևանցուկ դուրս յեկավ առանձնամենյակից ու դարձավ զուան մոտ խոնված պալատականներին.

— Պարոնայք։ Ահա ձեզ նոր Պուշկինը։ Հին Պուշկինին մոռանանք։

Սակայն դրանք լոկ խոսքեր եյին։ Բանից դուրս յեկավ, վոր Պուշկինից յերբեք դուրս չի գա Դերժավին, Կարամզին կամ Ժուկովսկիյ. թագավորը յերբեք չի կարողանա լիակատար վստահություն ունենալ նրա վրա։



ԹԱԳԱՎՈՐԻ ՅԵՎ ԺԱՆԴԱՐՄՆԵՐԻ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Պուշկինին իրավունք արվեց Մոսկվայում ապրելու։ Մոսկվան հրճվանքով ընդունեց նրան։ Յերբ առաջին անգամ նա յերևաց թատրոնում, ամենքի բերանում Պուշկինի անունն եր, ամենքը խոսում եյին նրա մասին, ամենքն ուզում եյին մոտիկից տեսնել նրան։ Կանացի սեռը հանգստություն չեր տալիս նրան պարահանդեմներում, ամենքն ուզում եյին նրան հետ կոտիլիոն և մազուրկա պարել։

Հետագա տարիներում Պուշկինն ապրում եր մերթ Մոսկվայում, մերթ Պետերբուրգում։ Չսայած վոր նա լիովին անձնատուր եր յեղած մեծ քաղաքի հաճույքներին, նրա գրական զբաղմունքները հաջողությամբ առաջ եյին գնում։ Նա սիրով և հափշտակությամբ շարունակում եր Յեվգենիյ Ռուբենից։ Յերկու յերեք շաբաթվա ընթացքում գրեց վերջացրեց ամբողջ «Պոլտավան»։ Շատ անգամ նա գիշեր-ցերեկ անդադրում գրում եր, նրա սովորությունն եր գրածներն անվերջ ուղղել կոկել, հղկել։

Աքսորից վերադառնալուց հետո, Պուշկինը թագավորի և կառավարության հանդեպ իրեն այնպես եր պահում, վոր բժախնդրության առիթ չեր լինում: Համենայն դեպս նրա քաղաքական անբարեհուսության մասին խոսք անգամ չեր կարող լինել: Չնայած այս բոլորին, Նիկոլայը շարունակում եր իր անվստահ վերաբերմունքը դեպի Պուշկինը:

Թագավորի ու Պուշկինի միջև միշնորդի գեր կատարողը ժանդարմային զեներալ Բենկենդորֆն եր նորին մեծության սեփական գրասենյակի նշանավոր «Յերրորդ բաժանմունքի» պետը. Բենկենդորֆը թագավորի ամենամոտիկ մարդն եր: Մոսկվայում, իր մտերիմների շրջանում, Պուշկինը կարդաց իր նոր վերջացրած «Բորիս Գորդոնովվը»: Այս առթիվ Բենկենդորֆն անմիջապես մատնացույց արեց, վոր Պուշկինը վոչ մի ձեր տակ իրավունք չունի «տարածելու» իր գրվածքները. յեթե նախապես այդ գրվածքը չի արժանացել կայսրի հավանությանը: Ահա, ուրեմն, այս եր այն «արտոնյալ» վիճակը, վորն իրը թե արված եր Պուշկինին. մինչև անգամ իր մտերիմների շրջանակում նա իրավունք չուներ կարդալ իր գրվածքներն առանց նախնական թույլտվության:

Վորոշելով ձեռնարկել «Բորիս Գորդոնովվի» տպագրությունը, Պուշկինն իր պիեսն ուղարկեց կայսրին՝ գրաքննության համար: Շուտով նա Բենկենդորֆից տեղեկություն ստացավ, վոր կայսրը մեծ բավականությամբ կարդացել ե պիեսը և նրա վերաբերյալ գեկուցագրի վրա բարեհանել ե գրել. «Յես կարծում

եմ, վոր պ. Պուշկինի նպատակն իրազործված կլիներ, յեթե նա, անհրաժեշտ սրբագրություններն անելով, իր կոմեղիան վերափոխի պատմական վիպի կամ ոռմանի՝ վալուել Սկոտի նմանողությամբ»: Տգետ կայսրը բանաստեղծին հանձնարարում եր արմատապես վերամշակել հանձնարեղ յերկն իր ցուցմունքների համաձայն: Այս հիմար հանձնարարության ամբողջ կոմիզմը մենք կդնահատենք, յեթե հիշենք, վոր «Բորիս Գորդոնովվը» գրելիս՝ Պուշկինի նպատակն եր յեղել հենց մեր թատրոնի խոր սեփորմը: Պուշկինը դառն հեգնանքով պատասխանեց Բենկենդորֆին. «Համաձայն եմ, վոր իմ դրամատիկական պոեմն ավելի թեքվում ե դեպի պատմական ոռմանը, քան թե դեպի տրագեդիան, ինչպես վոր թագավոր կայսրը բարեհանձել ե նկատել Ցավում եմ, վոր անկարող եմ վերափոխել մի անգամ արդեն գրածս: Սակայն ինքնակալի խորհուրդն ել հրաման ե. — պիեսի տպագրությունը պետք յեղավ հետաձգել:

Այսպես սկսվեց ժանդարմի և նրա չարամիտ իշխանավորի խնամակալությունը հանձնարեղ բանաստեղծի վրա, վոր տեսեց մինչև նրա կյանքի վերջը: Խնամակալության տակ եր վոչ միայն նրա գրական գործունեյությունը, այլև նրա ամեն մի քայլը:


Յերկու սպայի մոտ գտնվել ելին գրաքննչության կողմից արգելված հատվածներ «Անդրե Շենյե» բանաստեղծությունից, վոր կրում եր «Դեկտեմբերի 14-ի մասին» վերնագրերը: Այս գործով պատասխանատվության կանչվեց նաև Պուշկինը: Դորձը տեսեց մոտ յերկու տարի: Վերջապես Պուշկինին հաջողվեց ապացու-

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՐԻ ԿՈՎԿԱՍ

ցեր վոր այդ բանաստեղծությունը վոչ մի կապ չունի գեկտեմբերյան դեպքերի հետ և գրված ե գեկտեմբերի 14.ից շատ առաջ: Այս գործի հետեւանքն այն յեղավ, վոր Պուշկինին ամենախիստ կերպով արգելվեց «հասարակության համար բաց թողնել» իր շարադրությունները՝ առանց գրաքննչության նախնական թույլտվության, իսկ ինքն ել դրվեց վոստիկանության գաղտնի հսկաղության տակ:

Դեռ նոր եր վերջացել այս գործը, յերբ մի նոր գործ սկսվեց Պուշկինի գեմ. այս գործն ավելի լուրջ եր Կառավարության ձեռքն եր ընկել Պուշկինի տակավին Քիշնեում գրած «Դավրիլիադա» հակակրոնական պոեմը, վորը ծաղրում եր ավետարանական առասպելը Քրիստոսի անարատ հղության մասին: Այսպիսի սըրբապղծության համար Պուշկինին կարող ելին ընդմիշտ նստեցնել վանական ամենասոսկալի բանդերից վորեւ մեկում: Բազմաթիվ հարցաքննությունների ժամանակ Պուշկինը համառօրեն ժխտում եր եր հեղինակ լինելը. բայց նրա հոգին շատ եր անհանգիստ: «Կանխազդացում» բանաստեղծության մեջ Պուշկինն արտահայտում ե իր այդ ժամանակի հոգեկան ապրումները:

Վերջիվերջո, լիովին չպարզված պատճառներով, այս գործը կարձվեց:



Քսանական թվականների վերջում մերձավորներն ակսեցին վորոշ փոփոխություններել Պուշկինի բնաւորության մեջ: Նա առաջվա հաճույքը չեր զգում մեծ աշխարհային կյանքից: Նա պահանջ եր զգում իր սեփական անկյունը, իր ընտանեկան կյանքն ունենալու:

1828 թվին, Մոսկվայի պարահանդեսներից մեկում, Պուշկինը ծանոթացավ 16 տարեկան մի որիորդի հետ: Դա նատալիս Նիկոլաևնա Գոնչարովան եր, մի թեթևութեալիկ աղջիկ, վորի ամբողջ արժանիքն այն եր, վոր լավ ֆրանսերեն եր խոսում և գեղեցիկ պարել գիտեր. բացի դրանից, հրաշալի գեղեցիկ եր այդ աղջիկը: Պուշկինը սիրահարվեց նրան: Պատճում են, վոր այդ ժամանակներում նատալիս Նիկոլաևնան Պուշկինի վոչ մի գովածքը դեռ չեր կարդացել: Պետք ե նկատել, վոր նա իր հետագա ամբողջ կյանքումն ել չափազանց անտարբեր եր Պուշկինի գրավոր վաստակների հանդեպ: Պուշկինը լինում եր նրանց մոտ. 1829 թ. ապրիլի վերջերին նա պաշտոնապես խնդրեց նատալիայի ձեռքը.

նրան պատասխանեցին, վոր Նատալիան դեռ շատ ջաւ հեղ է, հետևաբար պետք կլինի սպասել:

Նույն գիշերը Պուշկինը մեկնում է Կովկաս՝ դեպի դործող բանակը:

Այդ ժամանակ Ռուսաստանը պատերազմում եր Թուրքիայի դեմ: Կովկասյան ֆրոնտում գլխավոր հրամանատար Պասկեիչը խուժել եր Թուրքիայի սահման-ներից նիրս և հարձակվում եր Երզրումի վրա: Նրա բանակում ծառայում եր Նիժնի-Նովգորոդի դրագուն-ների գնդի հրամանատար՝ Պուշկինի վաղեմի բարեկամ Նիկ. Նիկ. Ռասուկիյ կրտսերը, իսկ Ռասուկու ադյուտանուն եր Պուշկինի կրտսեր յեղբայր Լեվը: Մայիսի վերջերին Պուշկինը հասավ Թիֆլիս, այնտեղ ապրեց յերկու շաբաթ ու ճանապարհ ընկավ բանակին հասնելու: Տեղ հասնելուց հետո ներկայացավ Պասկեիչին և բնակվեց Ռասուկու վրանում:

Բանակային կյանքը շատ գուրք յեկավ Պուշկինին: «Թնդանոթը, —պատմում է նա, —մեզ արթնացնում եր լուսաբացին: Վրանի քունը հրաշալի առողջ քուն եւ ծաշի ժամանակ ասիական խորովածը թրջում ելինք Տավրոսի ձյուներում սառցրած անդլիական գարեջրով և շամպայնով»:

Պուշկինը, կազակի ձի հեծած ու մտրակը ձեռքին, զնում եր զրջագայելու: Սև սերտուկ հագած և գլխին ցելինքը դրած այդ մարդը մի շատ տարորինակ յերեվույթ եր ներկայացնում զինվորականների մեջ: Զինվորները Պուշկինին գերմանացի քահանա եյին համարում: Բանակը հասավ Երզրում և 1829թ. հունիսի 27-ին

վերցրեց քաղաքն՝ առանց վորեեւ կիմադրության հանդիպելու: Չնայած սրան, Պասկեիչը քաղաքի առումը ներկայացրեց իբրև մեծ հաղթանակ: Պուշկինը Երզրում մում մնաց յերեք շաբաթից ավելի: Քաղաքում յերեան յեկավ ժամանակությունը վճռեց մեկնել: Պասկեիչն աշխատում եր պահել Պուշկինին, առաջար-կելով ականատես լինել հետագա ձեռնարկումներին: Կերպ ականատես լինել համար, հավանորեն, արդեն պարզ եր բայց Պուշկինի համար, հավանորեն, արդեն պարզ եր այդ ձեռնարկումների բնույթը, —և նա հրաժեշտի վողացյն տվեց Պասկեիչին և սեկնեց Ռուսաստան:

Ինչքան ավելի յեր հասունանում Պուշկինի ստեղծագործությունը, ինչքան ավելի առաջ եր գնում նա, այնքան ավելի քիչ եր սկսում հասկանալ նրան քննադատությունը, այնքան ավելի սառն եյին վերաբեր-գում նրան ընթերցողները:

«Պուտավան» սառն ընդունելություն գտավ հասարակության կողմից: Բուլղարինի որդան «Սեփերնայա շեկան» չափախնդորեն գրում եր. «Հասարակության կողմից «Պուտավան» ցույց տրված սառն ընդունելությունը պարզ ապացույց ե, վոր անունների հմայքն անհետացել ե»:

Անտարբերությամբ ընդունվեց «Բորիս Փողու», վոր 1830 թվին վերջապես ույս լուսավ: Սրա մասին գրում եյին. «Պոեմիան ստեղծագործություն ե, իսկ այստեղ վաչ մի որիգինալ ստեղծագործություն չկա»: «Ոնեղինի» յոթերորդ գլխի, վեպի այդ լավագույն գլուխներից մեկի մասին հայտարարում եյին՝ «Լիակատար անկում»:

Ամուր փակվելով սառը և լոին միայնության մեջ,  
Պուշկինը գրում եր:

Պոե՛տ, սիրուլն դու ամբոխի մի՛ տար զի՞ն—

Նո՛ւ կը լոեն աղմկալից դրվագներ.

Ծադր ու լուսանք քո՛ղ վոր քափեն քա զիսին,  
Այլ դու մընա միւս անխոռով, անյերեր:


Պուշկինի հասարակական աշխարհաճայացքի բեկումը, վոր սկսված եր տակավին զեկաեմբերի ապստամբությունից առաջ, գնալով ավելի յեր խորանում:

Նա առաջիւ նման դառնորեն ցավում եր տաժանակիր աշխատանքի աքսորված զեկաբրիստների համար. նա հույսը չեր կտրում, վոր նրանց ներուակչութենն. բոցավառ վողջույններ եր ուղարկում Սիբիր, միաժամանակ գուշակելով, վոր բաղձալի որերը գալու յեն:

Ենվ կը նեկնեն մի որ շղբաներ ձեր,  
Բանդը կդառնաս խղնուկ ավերակ,  
Ազատությունը դեմ կվազի ձեզ,  
Ու ընկերներից սրեր կսանաֆ:

Նա պատկերացնում եր իրեն յերգիչ Արիոնի կերպարանքով, վորը փրկվել է ընդհանուր նավախորտակումց և շշարունակում ե յերգել նախկին որհներգը»:

Բայց «նախկին որհներգների» համար նա այժմ հավատքը կորցրել եր. զեկաբրիստների գործը նա անշուսալիորեն տանուլ տված գործ եր համարում:




## ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՅԵՎ ԲՈԼԴԻՆՈՅՈՒՄ

1830 թ. վաղ գարնանը Պուշկինի՝ Մոսկվայի բարեկամներից մեկը պարահանդիսում հանդիպելով Նատալիա Նիկոլաևնա Գոնչարովային ու նրա մորը, խոսք ե բաց անում Պուշկինի մասին: Մայր ու աղջիկ բորեհանորեն են արտահայտվում Պուշկինի մասին ու ինդրում են բարեկել նրան: Պուշկինը հօգով կենդանանում ե, անմիջապես պատրաստվում ե և Մոսկվա ոլանում: Այստեղ նա այցելում ե Գոնչարովներին: Նրան ընդունում են փաղաքշանքով: Նա նորից ե սկսում հաճախել նրանց տունը և ապրիլի 6-ին յերկրորդ անգամ առաջարկություն ե անում:

Պուշկինի առաջարկությունն ընդունվում ե:

1830 թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ Պուշկինի պաշտոնական նշանդրեթը Նատալիա Նիկոլաևնա Գոնչարովայի հետ: Պուշկինի հայրը վորդու ամուսնության առովայի հետ: Պուշկինի հայրը վորդու ամուսնության առթիվ Նիժնի-Նովգորոդի իր կարգածքներից բաժին հանեց նրան կիստենս գյուղի գրավ չգրված գյուղա. կան յերկու հարյուր «շունչ»: Աշնան սկզբին Պուշկինը մեկնեց Նիժնի-Նովգորոդի նահանգը՝ իր կալ-



Ա. Ա. Պուշկինը Բոլդինոյում:  
Նկարիչ Ի. Ռեպինը

վածքին տիրանալու ձեականություններն անելու և  
իր գույքային գործերը կարգի բերելու համար: Նա  
յենթաղբում եր շատ քիչ մնալ այնտեղ: Հենց այդ  
ժամանակ ծայր եր առել խոլերան: Մոսկվայից յերկու  
կայարան անցած՝ Պուշկինն իմացավ, վոր խոլերան  
արդեն հասել ե Նիժնիյ: Յերբ նա հասավ Բոլդինը  
(հայրենական կալվածքը), զրջակա գյուղերը շղթայ-  
վում եյին պահակներով ու ամեն տեղ կարանտիններ  
եյին հաստատվում: Ժողովուրդը արտնչում եր, տեղ-  
տեղ ել բունտեր եյին բոնկվում:

Անցան շաբաթներ ու ամիսներ, իսկ Պուշկինը դեռ  
նստած եր Բոլդինոյում: Խոլերան տարածվեց ու ար-  
դեն Մոսկվային եր մոտենում: Կարանտինները փակե-  
ցին բոլոր ճանապարհները: Մոսկվան ողակվեց զինվո-  
րական կորդոններով (պահակախմբերով): Ասում եյին,  
թե խոլերան արդեն Մոսկվա յե հասել, Պուշկինը սաս-  
տիկ անհանգիստ եր իր նշանածի, նրա առողջության  
և անվտանգության համար: Դրա հետ միասին լուրեր  
եյին գալիս, թե հարսանիքն իբր քանդվում ե, նա-  
տալիս Նիկոլաևնան ուրիշ մարզու յե գնում: Նա  
բուռն կերպով Մոսկվա յեր ձգտում, յերկու անգամ  
գուրս յեկավ գեպի Մոսկվա, հույս ունենալով մի կերպ  
անցնել կարանտիններից, բայց յերկու անգամին ել  
հարկ յեղավ վերադառնալ:


Բոլդինոյում անցկացրած աշնանը Պուշկինի ստեղ-  
ծագործության թափը միանգամայն անսովոր եր: Յե-  
րեք ամսում նա գրեց «Փոքրիկ տրաքեղիաներ», «Տնակը  
կոլոմնայում», «Բելկինի վիպակները», «Ոնեգինի» վեր-

Զին յերկու գլուխները, մոտ յերեսուն լիրիկական բանաստեղծություններ: Այդ աշունը Պուշկինը համարում եր «Վորդեծնական աշուն»:

Զարմանալի յին Պուշկինի այդ ժամանակվա գըրվածքների վոչ միայն քանակն ու բարձր փորակը, այլև այն արագությունը, վորով նա մի տրամադրությունից մյուսն եր անցնում: Թափանցիկորեն-զվարթպատմվածքներին, ինչպես են «Գեղջկուհի որիորդը», «Բուքը», «Տնակը Կոլոմնայում», հաջորդում եյին խորապես լուրջ դրամաներ, ինչպես «Ժլատ ասպետը», «Մոցարտը և Սալյերին», «Խնջույքը ժանտախտի ժամանակ»: Այդ աշնանը նրա լիրիկան լեցուն ե ամենաքաղաքատեսակ, իրար հակառակ տրամադրություններով: Դեկտեմբեր ամսի սկզբին միայն Պուշկինին հաջողվեց, վերջապես, դուրս պրծնել Բոլդինոյից: Դեկտեմբերի 5-ին նա Մոսկվայումն եր:

Հարսանիքը տեղի ունեցավ 1831 թ. փետրվարի 18-ին Բոլշայա Նիկիտսկայա փողոցի (այժմ Գերցենի փողոց) Բոլշոյե Վոզնեսենիյե յեկեղեցում: Պուշկինը, վերջին որերին հակառակ, ուրախ եր ու զվարթ, բարեկամների հետ սիրալիր, ծիծաղկոտ: Բայց արարողության ժամանակ, մատանիները փոխելիս, Պուշկինի մատանին վայր ընկալ: Հետո մարեց նրա ձեռքի մոմը: Մնահավատ Պուշկինը գույնը թոցրեց ու շնչաց:


— Այս բոլորը վատ նախանշաններ են:



## ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Պուշկինը մտադիր եր կնոջ հետ ապրել Մոսկվայում: այստեղ նա լավ կահավորված բնակարան եր վարձել զՅես ամուսնացած եմ ու բախտավոր, — զրում եր նա Պլետնյովին: — Յես մի ցանկություն ունեմ միայն. այդ այն ե, վոր իմ կյանքում վոչ մերան չփոխվի. սրանից լավագույնը չեմ ակնկալում: Այս վիճակն ինձ համար այնքան նոր ե, վոր յես, կարծես, վերածնվել եմ: Մակայն Պուշկինի հարաբերությունը զոքանչի հետ քանի գնում ավելի սրվում եանտանելի յիր դառնում: բանն այնտեղ հասավ, վոր մայիսի կեսերին Պուշկինը կնոջ հետ տեղափոխվեց Պետերբուրգ՝ այնտեղ բնակություն հաստատելու համար: Նույն ամառը Պուշկինն ամառանոց վարձեց Պետերբուրգի մոտ, Ցարսկոյե Սելլոյում:

Պուշկինը սիրում եր կնոջը: Բայց նատալիա Նիկոլաևնան իսկապես հետաքրքրվում եր միայն իր արդուգարդերով և այն հաջողություններով, վոր ուներ նա բարձր շրջանակներում: Իր բանաստեղծ ամուսնու լարված ստեղծագործական ու մտավոր կյանքում նա



Ա. Ա. Պուշկին

Նկար Ա. Սերովի



Նատալիա Նիկոլայևնա Պուշկինա

միանգամայն անընդունակ եր վորնե մասնակցություն  
ունենալու: Ստեղծագործական ավյունով համակված  
Պուշկինը շատ անգամ վազում եր կնոջ մոտ՝ իր նոր  
բանաստեղծությունը կարդալու. իսկ կինը բացական-  
չում եր. «Տե՛ր աստված, ինչքան ձանձրացել եմ քո վո-  
տանավորներից, Պուշկին»:

Խոլերան, վոր ձմեռը համարյա խաղաղվել եր, գա-  
րունը բացվելուն պես նորից բռնկվեց և մոտենում եր  
նույնիսկ Պետերբուրգին: Կայսրը և կայսերական տունը  
տեղափոխվեց Ցարսկոյե Սելո:

Մի անգամ Ցարսկոյե Սելոյի պարկում Պուշկինը  
հանդիպեց կայսրին: Նիկոլայը շատ վողորմածաբար  
վերաբերվեց Պուշկինին, հարցուված արեց նրա գոր-  
ծերի մասին և ի միջի այլոց հարցրեց, թե ինչո՞ւ նա  
չի ծառայում: Պուշկինը պատասխանեց, թե պատրաստ  
է ծառայելու, սակայն, բացի գըական ծառայություն-  
նից, ուրիշ վոչ մի ծառայություն չգիտե: Այն ժամա-  
նակ թագավորն առաջարկեց նրան գրել Պետրոս մեծի  
պատմությունը:

Պուշկինի գեղեցկուհի կինը շատ դուք յեկավ թա-  
պուհուն. Կայսրը գեռ առաջ, Մոնկվայում յեղած ժա-  
մանակ, տօնական հանդեսներին տեսած եր նատալիա  
Նիկոլաևնային, յերբ նա գեռ մատաղահաս աղջիկ եր,  
և այն ժամանակից համարում եր նրան սիրուն և հա-  
մակընի որիորդ: Թագուհին ցանկություն հայտնեց,  
վոր նատալիա Նիկոլաևնան լինի արքունիքում:

1831 թվի աշնանը Պուշկինը Ցարսկոյե Սելոյից  
Պետերբուրգ փոխադրվեց: Նա պաշտոնապես նշանակ-

վեց արտաքին գործերի պետական կողեգիայի ծառա-  
յող, տարեկան հինգ հազար ոուրլի ոոճիկով: Սակայն  
այդ գումարը շատ փոքր եր՝ նրա ներկա կարիքներին  
գոհացում ատալու համար:

Նատալիա Նիկոլաևնայի կյանքն ընթանում եր  
անընդհատ զվարճությունների, տանսակատարություն-  
ների ու պարահանդեսների մեջ: Նա տուն եր վերա-  
դառնում առավոտյան ժամը չորսին.հնգին ու տեղից  
վեր եր կենում չափազանց ուշ. ճաշում եյին յերեկոյան  
ութ ժամին: Ճաշից հետո Նատալիա Նիկոլաևնան փո-  
խում եր զգեստներն ու նորից հեռանում տնից: Նրան  
ուղեկցում եր ամուսինը: Ինքը Պուշկինն այլևս չեր  
հետաքրքրվում վոչ պարերով և վոչ ել պարահանդես-  
ներով: բայց հո չեր կարելի, վոր կինը մենակ գնար:  
Յեվ բոլոր յերեկոները Պուշկինն անց եր կացնում  
պարահանդեսներում: Կանգնում եր պատի տակ, ան-  
հետաքրքրությամբ նայում եր պարողներին, պաղպա-  
ղակ եր ուտում և հորանցում:

Բարեկամները հարածուն դառնությամբ դիտում  
եյին, վոր Պուշկինն այդ ժամանակ ստեղծագործու-  
թյան տեսակետից սոսկալի պայմաններում եր գտնվում:  
Նա ինքն ել ախրությամբ գրում եր իր բարեկամնե-  
րից մեկին: «Չունեմ ամուրիի պատ կյանքի անդրս-  
րությունը, վոր անհրաժեշտ ե զբելու համար: Նոր աշ-  
խատությունների համար չկար միայնություն. ար-  
դեն զրված աշխատությունների տպագրության շուրջն  
անդադար հագում եյին խոչընդոտներ, վորոնք բղխում  
եյին Պուշկինին շնորհված այն բարձրագույն «վողոր-

մածությունից», վորով նրան իրավունք եր տրված իր  
յերկերը կայսրին ներկայացնել գրաքննչության հա-  
մար:

Պուշկինը յենթագրում եր, թե այդ իր իրավանեն  
ե. բայց բանից դուրս եր զալիս, վոր զա իր պարտա-  
կանությունն ե: Ենք Պուշկինը զրում եր Բինկենդոր-  
ֆին. «Համաձարկվում եմ խնդրել մի շնորհ անել ինձ,—  
առաջիկայում իրավունք ունենալ մանը յերկերիս հա-  
մար սովորական գրաքննչության դիմելու»: Ահա թե  
ինչպիսի շնորհի մասին ստիպված եր սիջնորդություն-  
հարուցել Պուշկինը:

Պուշկինը շտա եր աշխատում արխիմենում, ցարի  
հանձնարարած Պետրոս I-ի պատմությունը գրելու  
նյութեր հավաքելու համար: Բայց Պետրոսի պատմու-  
թյան վերաբերյալ նախապատրաստական աշխատան-  
քից նրան կտրում եր մի ուրիշ աշխատանք: Պուշկի-  
նին հետաքրքրում եր 18-րդ դարի կազակայինություն-  
գացիական ապստամբության առաջնորդ Պաւաչովը:  
Միաժամանակ նա միտք հղացավ մի ոռման գրել Պու-  
շկաչովի ժամանակաշրջանից: Դրա համար Պուշկինը  
պետք ե այցելեր Արևելյան Ռուսաստանի վայրերը,  
ուր գործել եր Պուտաչովը: Պուշկինը չորս ամսով ար-  
ձակուրդ ստացավ և 1833 թվի հուլիսի 17-ին մեկնեց  
Պետերբուրգից: Իսկ նրա հետեւից կեպի այն նահանգ-  
ների պետերը, ուր պետք ե այցելեր Պուշկինը, թափ-  
վեցին գաղտնի հրահանդեսը: «Հիմնարկության մեջ  
պատշաճ կարգադրություն անել տիտուլյաշ խորհրդա-  
կան Պուշկինի մասին՝ վոստիկանական գաղտնի հսկո-

զություն չսահմանել նրա ապրելակերպի ու վարքի նկատմամբ»:

Պուշկինն այցելեց Կազան, Որենքուրդ, Ուրալսկ։ Տարիքավոր բնակիչներին հարցուփորձ արեց Պուզաչովի մասին. դիտեց ուզմական գործողությունների վայրերը։ Որենքուրդից գնաց Բերդա ստանիցան, վոր Պուզաչովի նախկին մայրաքաղաքն եր:


Բերդայում Պուզկինը գտավ յոթանասուն հինգ տարեկան մի պառավի կաղակուճի, վորն անձամբ ճանաչել եր Պուզաչովին։ Պուզկինն այլ պառավի մոտ նստեց ամբողջ առավոտ, հարցուփորձ արեց նրան, լսեց նրա յերգերը և հրաժեշտի ժամանակ տվեց մի վոսկե չերպոնեց։

Պուզկինը մեկնեց Բերդայի բնակիչները խիստ զարմացել ելին. ինչու յեկավ այս մարդը, շատ հետաքրքրությամբ հարցեր տվեց ավազակի մասին, և ինչու պառավին մի չերպոնեց տվեց։ Կասկածելի բան եւ, Վայթե գդրախտություն պատահի մեր գլուխին։ Մի սայլուղարկեցին Որենքուրդ, պառավին ել իր չերպոնեցի հետ միասին իշխանության ներկայացրին և զեկուցեցին.

— Յերեկ մի ոտար պարոն յեկավ։ Նրա նշաններն են՝ վհչութարձրահասակ, մազերը սև և խուճում, դեմքը թխագույն։ Փորփրում եր պուզաչովշինայի մասին և վոսկի յեր նվիրում. պետք ե վոր նեռը լինի, վորով հետեւ յեղունդների փոխարեն մատերի ծայրին ճանկեր են։ (Ինչպես հայտնի յե, Պուզկինը շատ յերկար յեղունդներ եր պահում)։

1833 թվի հոկտեմբերի 1-ին Պուզկինը վերադարձավ Բոլգինո և նստեց աշխատանքին Գրելու քիչ թիշտատ հարմար պայմաններ ելին ստեղծվել, և Պուզկինի ստեղծագործությունը յենաց նոր թափով։ «Գրելով տաբկել եմ, և արդեն խիստ շատ բան եմ գրել», — զրում եր նա կնոջը գոհ սրտով։ Ամիս ու կես Բոլգինոյում մնալով, Պուզկինը գրեց «Հեքյաթ ձկնորսի և ձկնիկի մասին», «Հեքյաթ մեռած արքայակատերը մասին», «Անժելո», Միցկեիչից թարգմանեց յերկու բարձագ, վերջացրեց Պուզաչովի պատմությունը ու գրեց իր ամենից ավելի աշքի ընկնող յերկու յերկերը՝ «Պղնձէ ձիավոր» պոեմը և «Պիկովայա դամա» («Ակուավի աղշղիկը») վիպակը։

1833 թվի նոյեմբերի կեսերին Պուզկինը վերադարձավ Պետերբուրգ։






Ա. Ս. Պուշկին:

Նկար Կուստոդիյեվլիք

Անիշկովի պալատում կազմակերպվում եյին ցարական ինտիմ (մտերմական) յերեկույթներ. սովորություններ յեղած՝ այդ յերեկույթներին հրովիրել միայն պալատականի կոչում ունեցող մարդկանց. Կամենալով, վոր Նատալիա Նիկոլաևնայի առաջ բաց լինեն պալատի գոներն այդ յերեկույթներին մասնակցելու համար, Նիկոլայ կայսրը 1834 թ. նոր տարվա առթիվ ստորագրում ե հետեւյալ ուկազը. «Արտաքին գործերի մինիստրության մեջ ծառայող տիտուլյար սովետնիկ<sup>1</sup> Ալեքսանդր Պուշկինին ամենավողորմածաբար շնորհում ենք մեր արքունիքի կամեր-յունկերի կոչում»։ Իր այս ուկազով Նիկոլայը հասավ կրկնակի նպատակի. Նախնարավորություն ստեղծեց շուտ-շուտ տեսնվելու Նատալիա Նիկոլաևնայի հետ, և յերկրորդ՝ մեծապես ստորացրեց Պուշկինին, վորին ատում եր հոգու խորքում։ Սովորաբար կամեր-յունկերի կոչում շնորհվում եր շատ

<sup>1</sup> Տիտուլյար սովետնիկ—տիտղոսավոր խորհրդական, վոր 9 բարձրագույնավոր եր համարվում։ (Ծան. Քարգմ.։)



Պետերբուրգի Մոյկա փողոցի տունը,  
ուր ապրում եր Պուշկինը

յերսիտասարդ մարդկանց, այնինչ Պուշկինն արդեն յերսիունինք տարեկան տղամարդ եր: Սպիտակով Պուշկինը նրանց բազմության մեջ անշուշտ ծիծաղելի տպավորություն եր գործելու:

Պուշկինը, իմանալով այս չնորհումի մասին, կատաղեց: Խելքը կորցրածի նման՝ նա կամեցավ գնալ պաշտամ ու կոպիտ խոսքեր ասել հենց իրեն՝ ցարին: Նա շատ լավ եր հասկանում իր շնորհումի պատճառը:

Տիուր և պղտորված եր Պուշկինի հոգին: Իր ծանր կյանքի մասին նա վոչ մեկին չեր գանգատիլում. բայց բարեկամները նրա գեմքի վրա հաճախ կարդում եյին բարեկամները նրա գեմքի վրա հաճախ կարդում եյին մի մռայլ անհանգստություն: Գալիս եր, տիսրամածքայլում սենյակում՝ ձեռքերը լայն վարտիքի գրապանները դրած, և վշտաբեկ կրկնում եր.

— Տիուր եւ Թախիծը մաշում եւ  
Այժմ գրեթե յերեք նրան զվարթ ու անհոգ չեյին տեսնում: Շատ սակավ եր արթնանում նրա մեջ նախկին կատակասերն ու չարաճճին:

Պուշկինի զբական միայնությունը գնալով մեծանում եր: Նրա պոեզիային հատուկ՝ խիստ և զուսպ պարզությունը, արձակի սեղմ դրվագումը չեյին զոսպարզությունը, համարակությանը, վոր հափշտակությամբ հացնում հասարակությանը, պոր հափշտակությամբ, Պալինսկու ճոռոմ արձակը և անտարբեր անցնում եր Պուշկինի կողքով:

Պուշկինը քիչ եր գրում, գրածին վերաբերվում եր չափազանց խիստ և այդ պատճառով ել շատ բան չեր տպագրում, Պուշկինի կյանքի վերջին վեց տարում

ընթերցողը նրա խոշոր գեղարվեստական յերկերից  
կարողացել եր ծանօթանալ միայն «Պիկովյա զամա»  
և «Կապիտանի աղջիկը» գրվածքների հետո:

Բարձր շրջաններում Պուշկինին չեյին սիրում,   
վրոպինետե վախենում եյին նրա սուր, սպանիչ եպի-  
գրամներից, իսկ եպիգրամների կողմից նա ժլատ չեր,  
այդ եր պատճառը, վոր «բարձր շրջաններում» նա  
ունեցավ անհաջող թշնամիներ:

1834 թվի բարեկենդանին Նատալիա Նիկոլաևնան  
շատ պարեւուց հիվանդացավ և, կազուրվելուց հետո,  
յերեխաների հետ գնաց Կալուգայի նահանգը, իր յեղ-  
բոր մոտ: Պուշկինը մենակ մնաց Վետերբուրգում; վոր-  
պեսզի հսկի «Պուգաչովյան բունտի պատճությունը»  
գրքի տպագրությանը: Անսպասելի կերպով Պուշկինը  
ծարսկոյե Սելոյից մի հուզումնալից նամակ և ստանում  
Ժուկովսկուց այն մասին, վոր կայսրին հայտնի յե-  
ղարձել մի նամակ, և նա շատ բարկացած է: Բանից  
դուրս յեկավ, վոր Մոսկվայի փոստը բաց եր արել  
Պուշկինի՝ իր կնոջը գրած մի նամակը և ներկայացրել  
եր այն Եերորդ բաժանմաւնքին: Այդ նամակում Պուշ-  
կինը գրած ե յեղել, վոր ինքը մտադրություն չունի  
ներկա լինել թագաժառանգի չափահասության տոնա-  
կատարությանը. նույն նամակում Պուշկինը բավական  
անհարգալիր լեզվով ե արտահայտվել իր կամերայուն-  
կերության մասին: Ժուկովսկուն հաջողվեց հարթել  
այս գործը:

Պուշկինը գմուց դուրս պըծնել վանդակից, վորի  
մեջ փակել եր նրան կառավարությունը: 1834 թվի

հունիսի 25-ին նա Բենկինգորֆին ներկայացրեց իր  
հրաժարականը: Հրաժարականի մասին խնդրագիրը ցա-  
րին սարսափելի զայրացրեց: Ժուկովսկին, Խելքը կորց-  
րած, սկսեց Յալուկոյե Սելոյից նամակներով ոմբակո-  
ծել Պուշկինին, մեղաղղելով նրան հիմարության և ան-  
տակտության մեջ: Ժուկովսկու ճնշան տակ Պուշկինը  
հետ վերցրեց հրաժարականը:

Ինչու կառավարության վերաբերմունքը Պուշկինի  
հանդեպ այգքան թշնամական եր ու կասկածամիտ: Իր  
ամբողջ եյությամբ Պուշկինն անցնդունելի յեր ինք-  
նակալության համար: Ի՞նչ արժեք ուներ այն, վոր  
Պուշկինն «ընդունում եր» ինքնակալությունը: Հար-  
կավոր եր վոչ թի «ընդունել», այլ խանդավառու-  
թյամբ սիրել ու գովաբանել նրան, տռանց քննադա-  
պատության, առանց ինքն իբեն զսպելու և առանց  
զգուշություն զործ զնելու: Իր «Մուսաստանի զբար-  
տիչներին», «Բորոդինյան տարեգարձը» ներբողներով  
Պուշկինը քիչ մնաց այդ ուղին բռներ, բայց իսկույն  
հետ զարձավ և այլևս չվերադարձավ նույն ուղին:

Իսկ Նիկոլայի ինչին եր պետք «պարզապես» հան-  
ձարել մի պոհատ, վորը «պարզապես» հանձարել յեր-  
կեր եր ստեղծագործում: Պուշկինը չեր տեղափորփու-  
նիկոլայան շրջանակներում վոչ թե իբրև նրա թշնամին,  
այլ իբրև մի շատ խոշոր կուլտուրական յերեպույթ,  
վորը գերաճել եր այդ շրջանակներից: Նմանապես և  
ալբոնական-աշխարհիկ շրջանակներում Պուշկինը չեր  
տեղափորփում վոչ թե իբրև նրա ժիտողը, այլ իբրև  
խորապես կուլտուրական, արժանապատվությամբ լըց-

ված մի մարդ, վորն որգանապես անընդունակ եր պա.  
լատական ծառա դառնալու:

Այս, Նիկոլային հաջողվեց ծունկ չոքեցնել նրան,  
բայց ձնկաշոք գրության մեջ ել Պուշկինը մնաց կան.  
գուն և չխոնարհեց հպարտորհն վեր բռնած իր գլուխը:  
Կայսրն այդ տեսնում եր և զգում, զոր Պուշկինն «ոտար  
ե» և ամեն բանի ընդունակ:

Մահվանից կես տարի առաջ նա գրում և «Հուշար-  
ձանը»: Այս բանաստեղծությունը, ըստ ձեին, Դերժա-  
վինի համանուն բանաստեղծության նմանողությունն  
է: Դերժավինն իր «Հուշարձանում» թվում ե այն արժա-  
նիքները, վորոնք, նրա կարծիքով, իրավունք են տա-  
լիս նրան հիշատակելու հետագա սերունդների մեջ:

Ընդգծված ձեռվ իրեն Դերժավինին հակադրելով,  
ահա ինչպես եր հիմնավորում Պուշկինն իր իրավունք-  
ները. նա պարծենում եր, զոր արահետը զեպի իր  
հուշարձանը չի ծածկվի, զոր այդ հուշարձանն իր ան-  
հնագանդ գլխով բարձրացել է ավելի վեր, քան ցարա-  
կան ամեն տեսակ հուշարձանները:

Իսկ ինչո՞ւ համար նա հույս ունի, զոր ժողովուրդը  
ձանաչելու և ընդունելու յե նրան:

Յեվլ յերկար կապրեմ սիրով  
Ժողովրդի սրտում,  
Քանի վոր Բնարն իմ հրահրել ե  
զգացմունքներ բարի,  
Յեվլ իմ դաժան դարում յերգել եմ  
յես ազատուրյուն  
Յեվլ գուր հանուն ընկածների:

Մեծ տարակուսանք ե առաջ բերում «Հուշարձանի»  
յեղափակիչ տունը.

Դու յերկեքի հրամանին անսա, ո՛ իմ մուսա,  
Յեվլ մի սարսի հալածանեքից յեվլ մի տեհչա  
պատկի,

Դու անտարբեր լսիր գրաբառուրյուն յեվլ  
գովասանք,

Յեվլ հիմարին մի տառեկի:

Այս բանաստեղծության յեղափակիչ տունը հասկա-  
նալի և լիովին տեղին կլինի, յեթե ընդունենք, զոր այն  
վոչ միայն Պուշկինի նախկին բանաստեղծական գոր-  
ծունելության համագումարն ի, այլև պոետի վճռական  
հայտարարությունն այն մասին, զոր նա անցյունը և  
բանաստեղծության բոլորվիկն նոր դիրքերը: «Բարի  
զգացմունքներ արթնացնելը, «ազատություն փառա-  
բանելը», «ընկածների նկատմամբ զողորմած լինելու կոչ  
անելը»,—ահա թե ինչն ե այժմ ամենից ավելի սկսում  
զնահատել Պուշկինն իր անցյալ գործունելության մեջ  
և ահա թե ինչումն ե նա տեսնում «աստծու հրամանը»  
ապագայի գործունելության համար: Վոտք կոխելով  
այդ նոր ուղին, նա պատրաստ է ծաղմին, վիրավո-  
րանքին ու զբարտանքին. այդ ճանապարհին նրան  
հարկավոր չեն վնչ գովեստները և վնչ պսակները:

Պուշկինն այժմ աշխատում է մտենալ Բելինսկուն. իր  
արիստոկրատ բարեկամներից գաղտնի նրան ե ուզար-  
կում իր «Սովորեմեննիկ» ժուռնալը, պատրաստվում  
նրան աշխատակցելու հրավիրել այդ ժուռնալին: Պուշ-

Կինի պոեզիայի մեջ սկսում են հնչել նրա վաղուց մոռացած հնչյունները:

Քաղաքացիական խորին զայրույթով և լցված մի բանաստեղծություն, վորը կրում է «Աշխարհիկ իշխանություն» գրգորիչ վերնադիբը: («Յնքը կատարվում եր մեծ հանդեսը...»): Պուշկինն սկսում է դրամա գրել ֆեոդալական ասպետության ժամանակակից, հոյակապ մտահղացում ունենալով ցույց տալ ասպետական աղնվականության ջախճախումն այն ժամանակվա դեմոկրատիայի՝ գյուղացիության և քաղաքացին աճող քնակչության կողմից: Գրված ելին միայն սկզբնական տեսարտնները, բայց մեզ հասել ե ամբողջ գրամայի պլանը պարունակող կոնսպիկուր, և նրանից յերեսում ե, թե հեղափոխական ինչպիսի պաթոսով պետք եւ շնչեր այդ դրաման:

\* \* \*

Պետք ե ասել, վոր Պուշկինի նյութական վիճակը գնալով վատթարանում եր: 1835 թ. ամառը Պուշկինը նորից փորձում է թույլտվություն ստանալ՝ 4—5 տարով գյուղ գնալու և այդ յեղանակով կարգի բերելու իր խանգարված գրամական գործերը:

Բայց այս անգամ ևս Նիկոլայը մերժում ե նրա դիմումը և կարգադրում է տալ նրան փոխարինաբար յերեսուն հազար ռուբլի ի հաշիվ նրան հասանելի սոճիկի: Փոխարինաբար ստացված այս դրամի մեծ մասը գործադրվեց անհետաձգելի պարտքերի հատուցման և այլ վճարումների համար. Պուշկինին դադարեցին ոռօճիկ


տալ, և նա ստիպված եր ապրել բացառապես գրական վաստակով, վոր նրա յեկամուտի միակ աղբյուրն երբ վակայն մշտական հոգսերից և անախորժություններից ճնշված բանաստեղծն առաջվա պես չեր կարող ըստ մասամբ վոչ սիայն Պետերբուրգում, ուր այդ հոգաշխատել վոչ սիայն Պետերբուրգում, ուր նա սերն ավելի եյին զգալի, այլ նաև գյուղում, ուր նա փոխադրվել եր 1835 թվի աշնանը: «Վոգենորության համար, — գրում եր նա կնոջը, — հոգեկան անդորրություն և հարկավոր, իսկ յես բնավ յերբեք հանգիստ չեմ»:

Նատալիա Նիկոլաևնան գյուղական կյանք չեր սիրում և վոչ մի ամառ Պուշկինի հետ գյուղ չեր գնացել: Ամառները նրանք Պետերբուրգի մոտակա կղզիներից մեկում աժառանոց եյին վարձում: Նատալիա Նիկոլաևնայի հաջողությունները բարձր շրջանակներում քանի գնում սեծանում եյին: Այժմ արդեն Պուշկինի վայելած փառքը չեր, վոր լուսապսակ եր հանգիստ մակատին, այլ ընդհակառակը, Պուշկինին՝ այդ համեստ տիտուլյար խորհրդականին ու «գրողին» փայլ տվողը նրա չքնաղատես, ամենքին հիացում պատճառող կինն եր:

1834 թվին Պետերբուրգ յեկավ յերիտասարդ ֆրանսացի՝ բառոն Ժորժ Դանտեսը, Բուրբոնների անկումից հետո նա չկամեցավ մալ Ֆլանսիայում և շարունակել իր ծառայությունը: Պետերբուրգում իր ունեցած կապերի շնորհիվ Դանտեսն առանց գժվարության ընդունվեց զինվորական ծառայության միջ վորպես սպա: Բարձր շրջանակներում նա շատ շուտով ակա-

նավոր դիբք գըավեց, Պարթև հասակով, գեղեցիկ դեմքով, ինքնավստահ, կենսուրախ, սրախոս — նա ցանկալի հյուր եր ամենուր:

Պուշկինը շատ շուտով ծանոթացավ Դանտեսի հետ: Նա սիրեց Դանտեսի ֆրանսական աշխուժությունը: Դանտեսն սկսեց լինել Պուշկինի տանը, նա սիրահարվեց Պուշկինի կնոջը. Նատալիա Նիկոլաևնան ել փոխադաբար հավանում եր նրան: Դանտեսն սկսեց սիրապնդել Նատալիա Նիկոլաևնային և պարահանուիներում պարում եր բացառապես նրա հետ: 1836 թվի ամառն արդեն ամեն տեղ խոսում եյին, վոր Դանտեսի աչքը Պուշկինի կնոջ վրա յե: Այս խոսակցությունների հետևանքով Պուշկինը բացարկվեց կնոջ հետ և դադարեց ընդունել Դանտեսին՝ իր տունը: Սակայն սիրահարները շարունակում եյին տեսակցություննենալ ընդհանուր ծանոթների մոտ, ինչպես և պարահանուիներում: Զար լեզուները խոսում եյին, վոր Պուշկինը «յեղերակիր ամուսնու», այսինքն կնոջից խարփած մարդու գերումն ե: Ասում եյին, վոր վավաշտ Նիկոլայն ել անտարբեր չե գեպի Նատալիա Նիկոլաևնան:



Պուշկինը վստահ եր իր կնոջ հավատարմության վրա, բայց ըջապատի ասեկուսները նրան կատաղեցնում եյին: Նա բոլորովին կորցրել եր իր հոգեկան անդորրությունը:

1836 թ. նոյեմբերի 4-ին Պուշկինը քաղաքային փոստով ստանում ե մի անանուն պատկիլ հետեւյալ բովանդակությամբ.

«Յեղերակիրների պայծառափայլ Որդենի գլուխ, վոր ասպետները, ավագ ասպետները և ասպետները, իրենց լրակազմ ժողովում, Որդենի մեծ մագիստրոսի՝ նորին գերազանցության Դ. Լ. Նարիշկինի նախագահությամբ, Ալեքսանդր Պուշկինին միաձայն ընտրեցին Յեղշերակիրների Որդենի մեծ մագիստրոսի տեղակալ և նույն Որդենի պատմագիր»:

Այսպիսի բովանդակությամբ նամակներ ուղարկ Պուշկինի ծանոթներից շատերին: Դ. Նարիշկին նաև Պուշկինի ծանոթներից շատերին: Դ. Նարիշկինը ամուսինն եր գեղեցկուհի Մարիա Անտոնովուհի էր, վոր յերկար տարիներ կապված եր Ա. Ե. Քսանդր կայսրի հետ: Պատկիլի իմաստն այն եր, վոր Պուշ-

Les Grands Croix Commandeurs et  
 Chevaliers de l'ordre des Cœurs réunis en grand Chapitre sous la  
 présidence du révérend grand Maître  
 de l'Ordre. S E O L Marychzine ont  
 nommé à l'unanimité Mr Alexandre  
 Porochkine coadjuteur du grand Maître  
 de l'Ordre des Cœurs et historiographe de  
 l'Ordre

Le secrétaire perpétuel Cte J Borik

Ա. Ա. Պուշկինի ստացած պասկվելը:

Կինը Նիկոլայի հանդեպ նույն դերումն ե, վոր դերումն  
 եր Նարըշկինն Ալեքսանդրի հանդեպ: Մեր որերում  
 արդեն պարզված ե, վոր պասկվիլի հեղինակը Պ. Վ.  
 Պուլուրուկովն և յեղած: Բայց այն ժամանակ Պուշկինն  
 այդ պասկվիլը վերագրել եր հոլլանդական դեսպան  
 Հեկկերենին, վոր վավաշոտ և բամբասամեր մարդու մեկն  
 եր: Հեկկերենը շատ եր սիրել Դանտեսին և արդեն 6  
 տարիս ե, ինչ վորդեգրել եր նրան, այնպես վոր Դան-  
 տեսին այժմ կոչում եյին բառոն Հեկկերեն: Պուշկինն  
 անհարժար եր համարում մենամարտի կանչել գեսպա-  
 նին, հետեւաբար և մենամարտի հրավերն ուղղեց Դան-  
 տեսին:

Ծերունի Հեկկերենը շատ վախեցավ այն հետևանք-  
 ներից, վոր կարող եր ունենալ իր և իր վորդեգրե-  
 համար լինելիք մենամարտը: Գտնվեց հետեյալ յելքը:  
 Վաղուց ե, վոր Պուշկինի մեծ քենին՝ Յեկատերինա  
 Գոնչարովան սիրահարված եր Դանտեսին: Ոգտվելով  
 այս հանգամանքից, նրանք բացատրեցին, թե Դան-  
 տեսը սիրապնդել ե վոչ թե նատալիա Նիկոլաևնային:  
 Նրա քրոջը, վորի հետ և պատրաստ ե ամուսնա-  
 այլ Պուշկինը հետ վերցրեց մենամարտի հրավերը,  
 իսկ 1837 թ. հունվարի 10-ին կայացավ Դանտեսի  
 հարսանիքը Յեկ. Գոնչարովայի հետ: Այս ամուսնու-  
 թյան շնորհիվ Դանտեսը դարձավ Պուշկինի ազգա-  
 կանը: Հստ ժամանակի սովորության Դանտեսը հար-  
 սանեկան այցելություն արեց Պուշկինին, բայց սա  
 նրան չընդունեց և հրամայեց հայտնել, վոր նրա հետ  
 վոչ մի հարաբերություն չի ուղղում ունենալ:



Չնայած սրան, նրանք հաճախակի հանդիպում եյին իրար ընդհանուր ծանոթների մոտ, նմանապես և պարահանդեսներում: Դանտեսն, ինչպես և առաջ, շարունակում եր սիրապնդել Նատալիա Նիկոլաևնային ել ավելի աներեսությամբ: Պուշկինի կատաղությունը նրան զվարժություն եր պատճառում:

Այս բոլորի հետևանքով Պուշկինի կատաղությունը խելագարության աստիճանի յեր հասնում:

1837 թ. հունվարի 26-ին նա մի շատ վիրավորական նամակ և գրում ավագ Հեկկերենին:

Այս նամակից հետո մենամարտն արդեն անխուսափելի յեր դառնում: Յեվ Պուշկինի ուղածն ել այդ եր, վորովհետև ստեղծված դրությունից ուրիշ յելք չկար: Հեկկերենի և Դանտեսի փոխադարձ հաճաճայնությամբ մենամարտի հրավիրողը յեղագ Դանտեսը: Մարտահրավերն ստանալուց հետո Պուշկինը հանգստացավ:

Հետեյալ առավոտ Պուշկինը վաղ վերկացավ: Նա հանգիստ եր ու լավ արամադրված, ինչպես և առաջի որը: Թեյից հետո սկսեց գրել: Բերին Դանտեսի սեկունդանտ (մարտավկա) գ'Արշիակի նամակը, վորով սա խնդրում եր բանակցությունների համար ուղարկել իր սեկունդանտին: Պուշկինը գնում ե սեկունդանտ ճարելու: Փողոցում պատահաբար հանդիպում ե լիցեյի դասընկերներից մեկին՝ Կ. Կ. Դանգասին, վորին և խնդրում ե իր սեկունդանտը լիներ: Սա սիրով ընդունում ե այս առաջարկը և խսկույն գնում ե գ'Արշիակի մոտ: Սրանք յերկուսով մշակում են մենամարտի պայմանները: Դանգասը բերում ե Պուշկինին մենամարտի


գրավոր պայմանները, սակայն Պուշկինն ավելորդ ե  
համարում կարդալ այն, նա ամեն պայմանի յեւ հա-  
մաձայն եր, ապա նա Դանզասին ուղարկում ե ատր-  
ճանակներ գնելու. իսկ ինքը միանգամայն անվրդով  
նստում ե իր «Սովետմեննիկ» ամսագրի ընթացիկ գոր-  
ծերով զբաղվելու.

Պայմանավորված ժամին Պուշկինը հանդիպեց Դան-  
զասին Վոլֆի հրուցակարանում, Նևիլիյ պրոսպեկտի  
անկյունում: Այստեղից նրանք սահնակով գնացին գե-  
պի Սև Գետակի մոտ գտնվող կոմենդանտսկայա ամա-  
ռանոցը, ուր իրար եյին հանդիպելու հակառակորդ-  
ները. միաժամանակ այստեղ հասան նաև հակառա-  
կորդները: Այստեղից քայլեն ուղղեցին գեպի մոտա-  
կա պուրակը, այնտեղ ընտրեցին մի բացատ, վոր  
ծածկված եր ձյունակույտերով: Ցերկու սեկունդանո-  
ները և Դանտեսը վոտքերով սկսեցին կոխկոտել ձյունը՝  
արանետ բանալու համար: Պուշկինն, արջի մուշտակը  
հագին, նստած եր ձյունակույտին և անհամբեր սպա-  
սում եր: Սեկունդանոները վերջին պատրաստություն-  
ներն եյին տեսնում: Պուշկինն անհամբեր հարցրեց.

— Դե լնչակես ե, վերջացրի՞ք!

Ամեն ինչ պատրաստ եր: Հակառակորդներին կանգ-  
նեցրին իրենց տեղերում, ատրճանակները տվին ձեռ-  
քերը: Դանզասը նշան տվեց գլխարկի շարժումով:

Պուշկինն արագ մոտեցավ բարյերին, կանգ տուավ  
և սկսեց նշան բռնել: Բայց այդ պահին Դանտեսը,  
բարյերին մի քայլ չհասած, կրակեց, Պուշկինն ընկավ  
շինելի վրա, վոր բարյերի տեղ եր ծառայում: Նա յե-



Մենամարտից հետո:

Նկար Բորիկը

ըեսնիվայր անշարժ պառկած եր: Սեկունդանտներն ու Դանտեսը վազեցին գեղի նա: Պուշկինն ուշքի յեղավ, գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Սպասեցէք, յես դեռ ուժ ունեմ կըակելու:

Դանտեսը վերադարձավ իր տեղը, կանգնեց կող՝ քանց և աջ ձեռքը դեմ արեց կրծքին: Պուշկինը ծնկի յեկավ ու կիսապառկոծ սկսեց նշան բռնել: Լսվեց կըակոցը: Դանտեսն ընկավ. Պուշկինը մի կողմ նետեց ատրճանակն ու գոչեց. — բրմի՛:

Ու նորից անգամ փովեց ձյունի վրա:

Սակայն Դանտեսն ստացել եր միայն կոնտուզիա. գնդակը թափանցել եր ձեռքի մկանները և կպել եր վարտիքի կոճակին. այս կոճակը փրկեց նրան:

Պուշկինն ուշքի գալով հարցրեց գ'Արշիակին.

— Սպանեցի՞ նրան:

— Վահ, միայն վերավորել եք:

— Զարմանալի՞ յի, — ասաց Պուշկինը, — յես կարծում եյի, վոր նրան սպանելուց հաճույք եմ ստանալու, բայց այժմ զգուժ եմ, վոր այլպես չե... Ասենք՝ հարաց մեկ ե: Հենց վրա կազդուրվենք, նորից կսկսենք:

Սեկունդանտները միացյալ ուժերով սահնակ նստեցրին Պուշկինին: Կոմինդանտակայա ամառանոցին հասնելով՝ տեսան այնտեղ Հեկկերենի ուղարկած կարետը: Դանտեսն ու գ'Արշիակն առաջարկեցին Դանդասին այդ կարետով տանել Պուշկինին, Դանդասն ընդունեց առաջարկը և Պուշկինին նստեցրեց կարետը, առանց հայտնելու, վոր կառքը Հեկկերենին և կարետն ուղղվեց քաղաք:

## ՄԱՅՎԱՆ ՄԱՅՃՈՒՄ

Նատալիա Նիկոլաևնան դեռ նոր եր վերադաշել զբոսանքից և Ալեքսանդրինա քրոջ հետ ճաշի յեր սպասում Պուշկինին։ Հանկարծ, առանց զեկուցելու, ներս և մտնում Դանզասը և հաղորդում, վոր հենց հիմա Պուշկինը մենամարտել ե Դանտեսի հետ և վիրավորված ե, բայց շատ թեթև։ Նատալիա Նիկոլաևնան վագում ե նախասենյակ, ուր ներս եյին բերում Պուշկինին։ Այստեղ կնոջ ուշքը գնաց։ Պուշկինին պառկեցրին բազմոցի վրա, նրա առանձնասենյակում։ Կինն ուշքի գույուց հետո կամենում ե մտնել ամուսնու առանձնասենյակը, բայց Պուշկինն ամուր գոչում ե՝ չստուես։ Նա չեր ուզում, վոր կինը տեսնի նրա վերքը, և այն ժամանակ միայն ներս հրավիրեց նրան, յերբ արդեն հանված պառկած եր անկողնում։

Մեկը մյուսի հետեւից հավաքվեցին բժիշկները. յեկան այցելության նաև Պուշկինի բարեկամները՝ Ժուկովսկին, Պլետնյովը, Վլազբեմսկին, Ա. Տուրգենևը։



Պուշկինը չափազանց տանջվում եր, բայց չնայած դրան հաճախ հարցնում եր կնոջ մասին։

— Նա, խեղճը, անմեղ տեղը տուժում ե և դեռ տուժելու յե հասարակաց կարծիքի յերեսից։

Ու իրին՝ կնոջն ել ասաց։

— Իմ մահվան համար չլինի թե քեզ գատապարտես։ Սա մի գործ եր, վոր սիայն ինձ եր վերաբերում։

Լեյբ-խիբուրգ Արենդատի միջոցով Պուշկինը խնդրեց կայսրին, վոր պատասխանատվության չենթարկվի Դանզասը՝ մենամարտությանը մասնակցելուն համար։ Դանզասը հիվանդից չեր հեռանում։ Նա հաղորդեց Պուշկինին, վոր ուզում ե մենամարտի կանչել Դանտեսին՝ նրա փոխարեն վրեժխնդիր լինելու համար։ Պուշկինը մոայլվեց։

— Վոչ, վոչ, հաշտություն, հաշտություն։

Զարությունը և կատաղությունը վոր վերջին ամիսներում նրան հանգստություն չեյին տալիս, այժմ չքացել եյին։ Բարեկամներից մի քանիսին այնպես եր

թվում, վոր Պուշկինն ուզում ե մեռնել և նույնիսկ ուրախ ե, վոր մահը փրկելու յե նրան ստեղծված անելանելի գրությունից:

Պուշկինը վիրավորվել եր փորից: Դնդակը ջախջախել եր գավականկրը: Վոսկրի կտորտանքները ճնշում եյին փորոտիքի վրա: Այսպիսի գեղքերում բժշկության մեջ ընդունված ե ամենից առաջ լիակատար հանգըստություն տալ փորոտիքին ե դադարեցնել նրա գոր: Ճողությունը ափիոնի միջոցով: Մինչդեռ լեյբ-խիրուրգ Արենդտը կարգադրում ե գրեին (հոգնա) դնել հիվանդին: Սոսկալի հետեանք ե ունենում գրեխի կիրառումը: Պուշկինի աչքերը վայրենի արտահայտություն են ընդունում. յերեսը ծածկվում ե սառը քրտինքով, ձեռքերն սկսում են սառել: Սարսափահար յեղած մեռնեկապանը գալիս ե Դանզասին հայտնելու, վոր Պուշկինը հրամայել ե տալ իրեն գրասեղանի վրա գտնված արկդը և սենյակից դուրս գալ իսկ այդ արկդում ատրճանակներն են: Դանզասն անմիջապես վազում է Պուշկինի մոտ ե խլում ե ձեռքից ատրճանակը: Հիվանդը խոստովանում ե, թե արդարեն կամեցել ե անձնասպանություն գործել, վորովհետեւ կրած ցավը ու տանջանքն անտանելի յեն:

Առավոտյան ցավերը փոքր ինչ մեղմացան: Պուշկինի բնակարանը կարծես պաշարման վիճակի մեջ լիներ: Ծանոթ-անձանոթ խոնվել եյին այդտեղ ու անվերջ հարցեր եյին տալիս. «Ի՞նչպես ե Պուշկինը. վիճակը չի՞ թեթեանում արդյոք. հույս կա արդյոք»: Իսկ Պուշկինի ուժերը քանի գնում թուլանում եյին: Մահն

արդեն մոտենում եր. հիվանդն այդ զգում եր: Բարեկամները նրան ասում եյին.


— Մենք բոլորս ել հուսով ենք, վոր կառողջանաս. մի հուսահատվիեր:

Պուշկինը պատասխանեց.

— Վհչ, իմ բանը վերջացած ե. յես մեռնելու յեմ. թերեւս այդպես ել հարկավոր ե:

Հունվարի 29.ին, կեսօրին մոտ, Պուշկինը խնդրում ե տալ իրեն հայելի. դիտում ե հայելու մեջ դեմքն ու ձեռքը թափ տալիս: Զարկերակը դանդաղում ե և՝ մի ձեռքը ակնթարթ ես՝ իսպառ դադարում ե: Ձեռքերն սկսում են սառել:

Ծնչառությունը քանի գնում դանդաղում ե: Մի վերջին շունչ ես, և կյանքը մարվեց հավիտյան:





Ա. Ա. Պուշկինի մասկան (մահադիմակը):  
Նկար Ե. Ժուկովսկայայի

Մոյկայի քալափին, այն տան առաջ, ուր մեռավ  
Պուշկինը, ժողովրդի մի չտեսնված բազմություն ել  
խոնված, դրանք յեկել եյին իրենց վերջին հրաժեշտը  
տալու Պուշկինի անշնչացած մարմինի:

Բարձր ազնվականության ներկայացուցիչները չե-  
յին, վոր շրջապատել եյին Պուշկինի դագաղը՝ ուսա-  
նողներ, ազատ պրոֆեսիայի տեր մարդիկ, ստորին  
կարգի աստիճանավորներ, մանր բուրժուազիայի դեռ  
նոր առաջ յեկած ուսդիկալ խավը, վոր՝ շատ չանցած  
կոչվեց «ուազնոչինեց», — ահա ովքեր եյին բանաստեղծի  
հուղարկավորները:

Իր կյանքի վերջին տարիներում Պուշկինն ողակ-  
ված եր մի զարհուրելի միայնությամբ՝ միայնություն  
հասարակական, բարոյական, կուլտուրական, դրակա-  
նական: «Ապրիլ մենակ», — դառնությամբ ասում եր  
Պուշկինն իր մասին: Նա չգիտեր, վոր այդ ողակից  
դուրս ունի հաղարավոր անկեղծ ու անձնվեր բարե-  
կուրս ունի հաղարավոր անկեղծ ու անձնվեր բարե-

այդ անհայտ բարեկամները շատ բանի համար կարող են անհերողամիտ լինել դեպի Պուշկինը, բայց մահն զգալ տվեց նրանց, թե վնաքան խոշոր, անփոխարինելի արժեք եր ներկայացնուած Պուշկինը և թե վնաքան կարենոր ուժ եր հանդիսանում նա: Ու նրանք ասացին, ասացին բարձրաձայն, կտրականապես, վնչ թե լոկ խոսքերով, այլ իրենց ամբողջ գործողությամբ՝ «Պուշկինը մերն ե»:

Այդ ժամանակ եր, վոր յերեան յեկավ տակավին համարյա անհայտ բանաստեղծ Լեռմոնտովի՝ Պուշկինի մահվան առթիվ գրած նշանավոր բանաստեղծությունը, վոր մի կրակոտ, զայրույթով լի պրոկլամացիա յեր: Այս բանաստեղծության ձեռագիր որինակներն անուվոր արագությամբ տարածվեցին ամեն տեղ: Յեվ բոլորը Լեռմոնտովի հետ կրկնում եյին.

Դուք, զահին կառչած ազան յեվ անգոն  
Դահիններ փառի յեվ ազատուրյան,  
Պատսպարվել եք օրենքի ներքա,  
Ձեզ համար ի՞նչ դաս յեվ ի՞նչ դատաստան.  
Բայց, անառակեներ, կա մի դաս վերին,  
Կա ահեղ մի դաս. նա կգա, կգա.  
Անմատչելի յե նա վասկու ուժին  
Յեվ մտի, զործի կանխատես վկա:  
Այժմ ձեր լեզուն առմիտ կգոցվի,  
Բանսարակուրյունը կլոի իսպառ,  
Ու ձեր սեվ արյամբ բնավ չեք քավի  
Զօհված պոետի արյունը արդար:

Հանրային զայրույթի բուռն պութկումը գարմաց ըեց և յերկյուղ ներշնչեց Նիկոլային:  
Նիկոլայն սկզբում անտարբեր կերպով վերաբերվեց Պուշկինի մահվան հանդեպ և նույնիսկ արդարացնուած ել Դանտեսի արած քայլը: Բայց հետո, հանրային զայրույթի բուռն պոռթկումից ազդված, հասկացավ, զոր հարցը մի անհշան «գրողի», չին (աստիճան) չունեցող կամեր յունկերի մասին չե, այլ մի այնպիսի անձի մասին, վորին թանկ են գնահատում ժողովրդի լայն շրջանները:

Ցեվ Նիկոլայ Մոմանովը կամառակամա պետք ե փոխեր իր վերաբերմունքը յեղելության հանդեպ. նա պետք ե այնպիս ցույց տար, վոր ինքն ել Պուշկինի մահը համարում ե ազգային մեծ կորուստ: Դանտեսին աստիճանազուրկ են անում և իրեն վոչուսահպատակի՝ քցում են Ռուսաստանից: Հեկկերենը նիդերլանդական կառավարության կարգադրությամբ հետ ե լանդվում դեսպանի պաշտոնից:

Մյուս կողմից Նիկոլայը գործ դրեց ամեն միջոց կասեցնելու համար հասարակական զայրույթի բուռն աճումը: Լրագրերին խստիվ հրամայված եր, Պուշկինի մահվան մասին լուրեր հաղորդելիս, լինել չափավոր և պատշաճի սահմաններից գուրս չգալ: Մի լրադիր, վոր Պուշկինի մահվան առթիվ արտահայտվել եր «մեր բանաստեղծության արևը մատավ» խոսքերով, նկատողություն ստացավ: Հուղարկավորության նախընթաց (հունվարի 30-ի լույս 31-ի) գիշերը, յերբ ժողովաց (հունվարի 30-ի լույս 31-ի) գիշերը, յերբ ժողովուրդը ցըվեց և բնակարանում մնացին սիայն հանգուրդը ցըվեց:

այդ անհայտ բարեկամները շատ բանի համար կարող եին անհերողամիտ լինել զեպի Պուշկինը, բայց ման զգալ տվեց նրանց, թե վնաքան խոշոր, անփոխարինելի արժեք եր ներկայացնում Պուշկինը և թե վնաքան կարեոր ուժ եր հանդիսանում նա: Ու նրանք ասացին, ասացին բարձրաձայն, կտրականապես, վոչ թե լոկ խոսքերով, այլ իրենց ամրող գործողությամբ՝ «Պուշկինը մերն ե»:

Այդ ժամանակ եր, վոր յերեան յեկավ տակալին համարյա անհայտ բանաստեղծ Լերմոնտովի՝ Պուշկինի մահվան առթիվ գրած նշանավոր բանաստեղծությունը, վոր մի կրակոտ, զայրույթով լի պլոկլամացիա յեր: Այս բանաստեղծության ձեռագիր որինակներն անսովոր արագությամբ տարածվեցին ամեն տեղ: Յեվ բոլորը Լերմոնտովի հետ կրկնում եյին.

Իուֆ, զահին կառչած ազան յեվ անգոն  
Դահիններ փառի յեվ ազատության,  
Պատապարվել եք օրեթի ներքո,  
Զեզ համար ի՞նչ դաս յեվ ի՞նչ դատաստի.  
Բայց, անառակենք, կա մի դաս վերին,  
Կա ահեղ մի դաս. նա կդա, կդա.  
Սննմաշելի յե նա վոսկու ուժին  
Յեվ մահի, գործի կանխատես վկա:  
Այժմ ձեր լեզուն առմիւտ կգոցվի,  
Բանսարկությունը կոչի խսպառ,  
Ու ձեր սեվ արյամբ բնավ չեք բավի  
Զահված պոեսի արյաւնը արդար:

Հայնբային զայրույթի բուռն պութկումը զարմաց բեց և յերկուուղ ներջնչեց նիկոլային:

Նիկոլայն սկզբում անտարբեկ կերպով վերաբերվեց Պուշկինի մահվան հանգեպ և նույնիսկ արդարացնում եր Դանտեսի արած քայլը: Բայց հետո, հանրային զայրույթի բուռն պութկումից աղղված, հասկացավ, զարցը մի անհշան «գրողի», չեն (աստիճան) չունեցող կամեր՝ յունկերի մասին չե, այլ մի այնպիսի անձի մասին, վորին թանկ են գնահատում ժողովրդի լայն շրջանները:

Յեվ նիկոլայ Ռոմանովը կամա-ակամա պետք և փոխեր իր վերաբերմունքը յեղելության հանգեպ. Նա պետք և այնպիս ցույց տար, վոր ինքն ել Պուշկինի մահը համարում և ազգային մեծ կորուստ: Դանտեսին աստիճանազուրկ են անում և իրեն վոչ-ուսահնապատկի՝ քշում են Ռուսաստանից: Հեկկերենը նիդերլանդական կառավարության կարգավորությամբ հետ և կանչվում գեսպանի պաշտոնից:

Մյուս կողմից նիկոլայը գործ ուրեց ամեն միջոց՝ կասեցնելու համար հասարակական զայրույթի բուռն աճումը: Լրագրերին խստիվ հրամայված եր, Պուշկինի մահվան մասին լուրեր հաղորդելիս, լինել չափավոր և պատշաճի սահմաններից դուրս չգալ: Մի լրագիր, վոր Պուշկինի մահվան առթիվ արտահայտվել եր «մեր բանաստեղծության արեւ մայր մտավ» խոսքերով, նկատողություն ստացավ: Հուղարկավորության նախընթաց (հունվարի 30-ի լույս 31-ի) գեշերը, յերբ ժողովաց լուս ցրվեց և բնակարանում մեացին սիայն հանգուրդը ցրվեց:

գուցյալի մերձավորները, տուն մտան ժանդարմաները՝  
զեներալ Դուբելտի զլիսավորությամբ։ Դագաղն իսա-  
կինսկիյ տաճարը փոխադրելու փոխարեն տարվեց  
մտակա յեկեղեցին, ուր և կատարվեց թաղման կարգը։  
Յեկեղեցի մտնել կարող եյին միայն հրավիրյալները։  
Կարգը կատարվելուց հետո դագաղը փոխադրում են  
յեկեղեցու նկուղը։

Փետրվարի 2-ին, կես գիշերին, ժանդարմային  
սպայի ուղեկցությամբ գագաղը հասարակ սայլով տար-  
փում և Պոկովի նահանգի Սլյատոգորսկ վանքը՝ պուշ-  
կինյան Միխայլովսկոյե գյուղից վոչ-հեռու, ուր պետք  
ե թաղվեր բանաստեղծը։ Պոկովի նահանգապետին  
վաղորոք կարգադրված եր թույլ չտալ վոչ մի ցույց,  
վոչ մի դիմավորում, վոչ մի դամբանական խոսք կամ  
համակրանքի վնչ մի արտահայտություն։ Գիշեր-ցերեկ  
անընդհատ քշում եյին սայլն անսովոր արագությամբ։  
Հենց իմանա՞ վոճրագործները շտապում են հապճեպ  
կերպով ծածկել իրենց սկ գործի հետքերը։

Փոստային կայարաններից մեկում մի ուղեոր կին  
տեսնելով, վոր ժանդարմաներն ինչ-վոր ձեռուվոտ ընկած  
շտապում են արագ փոխել ձիանքը, հարցնում ե, թե  
բանն ինչում ե։

— Ո՞վ ե իմանում ինչ ե։ Ասում են՝ մի ինչ-վոր  
Պուշկին ե սպանված, հիմի նրան խսիրների ու ծղոտի  
մեջ կոլոլած ենակես են թոցնում, ասես մի շուն լինի,  
մեղմ աստծու, մեղմ։

Այսպես եր թաղում Նիկոլայի պաշտոնական Ռու-  
սաստանը մեծագույն ոռւս պոետին։



\* \* \*

Պուշկինի մահվան որից անցել և հարյուր տարի։  
Այսոր տապալված և այն ինքնակալությունը, վորոն  
հալածելով հալածել եր բանաստեղծին ու վերջապես  
մահվան դուռը հասցըել նրան. տապալված և այն  
զգվելի իրավակարգը, վորի որով ժողովրդի մի մասը  
պետք և որնիբուն աշխատեր ու տանջվեր, իսկ մյուս  
մասն, անգործ նստած, հղիանար և յերջանիկ կյանք  
վայելեր։ Յերբ պատմական բեմը զբավեց հաղթական  
«խուժանը», Պուշկինի «իսկական» գնահատողները  
ցավելով հայտարարեցին, վոր վեհապահն գեղարվեստի  
վերջը հասել և, վոր իրենց՝ «իսկական կուլտուրայի»  
կրողներին՝ այսուհետև մնում և մեկուսանալ գաղտնի  
սրբավայրերը և այնտեղ շարունակել Պուշկինի պաշտամունքը, այն Պուշկինի, վորի հիշատակը ջնջելու  
յի ժամանակակից սերունդը։

Սակայն բնչ ենք տեսնում իրականում։

Միայնության մեջ հալումաշ յեղող Պուշկինը մի  
ժամանակ զբում եր։


Վարձահատուց յեզ դատավոր դաւ ինքն ես.  
Քո զարձը դու ամենից խիս կը դատես։  
Ինքն զա՞ն ես, արվետավա՛ր անաշառ։  
Գա՞ն ես. խուժանն հայնօյե՛ քոդ քա վաստակ,  
Ծաղրե բագինդ, ուր վառվամ ե քա կրակ,  
Ցեռուանիդ դրզվեցընե սղայաբաւ։

Յեկ անա ժամանակակից բանաստեղծը (Վլ. Վասիլինկոն) հիշելով Պուշկինի այս վշտահար տողերը, հեռայալ խոսքերով և դիմում նրան.


Ընկան փառքեր գերք չոր տերեվ,  
Ընկան գահեր՝ կացնահար.  
«Խուժանն» այն աշխարհացունց  
Յեռոտանիդ լոկ պահեց:

Այս, նրա յեռոտանին մնաց անսասան. և այսոր այն ավելի ամուր ե, քան յերբեկիցե ուրիշ ժամանակ։ Ընդհանուրի սերը զեպի Պուշկինն որպակուր աճում է, Խորհրդային յերկը ազատազրված ժողովուրդները հանձին Պուշկինի տեսնում են ոռւսական մեծ պոետին, ոռւս գրական լեզվի ստեղծողին, ոռւս նոր գրականության նախահորը, մի պոետի, վոր իր անմահ յերկի ըով հարստացրել ե մարդկությունը. Նրա յերկերը մինչև որս ել արթուն են պահում հեղափոխական միտքը, պայքարի յեն կանչում մարդկության յերջանկության համար. Պուշկինը հարկավոր ե ամենքին և հավասարապես ամենքի համար ել թանկ ե նա: Նա հարկավոր ե մեզ և թանկարժեք ե մեզ համար իր հանճարեղ ստեղծագործական ուժի համար, իր անզուսպ ըմբուտ վոգու համար, իր անընդհատ վորոնումների համար, այն բերկրության և գեղեցկության համար, վորով նա հազեցնում ե կյանքը, նրա խոշապես կուլտուրականության համար, նրա լեզվի ու վոճի հրաշալի գեղեցկության և յերաժշտականության համար։

Ժողովրդական այն արահետը, վորի մասին յերազուս




Ա. Ս. Պուշկինի դամբարանը



Ա. Ա. Պուշկինի արձանի բացումը  
Մասկովյառում:

Եր Պուշկինը, այսոր վերածվել ե լայնարձակ կոխոտ-  
ված ճանապարհի։ Պուշկինի գրքերը հրատարակվում  
են միլիոնավոր որինակներով. զրանք բոլորի աշխատա-  
վում են ընթերցող մասսաների կողմից, ինչպես անա-  
պատի չոր ավաղը ծծում ե ջուրը Նրան գիտեն ամեն-  
քը, Նրա գրվածքները թարգմանված են Խորհրդային  
Միության յերբեմնի ամենահետամնաց ժողովուրդների  
լեզուներով. Կատարվեց Պուշկինի մարգարեյությունը.

Համբավն իմ Ռուսիայում անծայրածիր  
կտարածվի,  
Ինձ կիմքի յուրաքանչյուր լեզու այնտեղ  
ապրող՝  
Սլավոնի բոոր սեզ ու Ֆինն ու դեռ այսօր  
վայրի  
Տունգուզը յեվ կալմիկն ըստեալ սիրող։



ԲՈՎԱՆԴՈՒԹՈՒԹՅՈՒՆ

b2

Մանկությունը և պատանեկությունը . . . . .	5
Պետերբուրգում . . . . .	11
Հարավում . . . . .	17
Միքայլովսկոյեյում . . . . .	25
Թագավորի և ժանդարմատերի խնամակալության տակ . . . . .	33
Ուզերություն գեղի Կովկաս . . . . .	37
Մոսկայում և Բոլգինյում . . . . .	41
Ամուսնությունից հետո . . . . .	45
Ազգունիքի գերին . . . . .	53
Մենամարտը . . . . .	63
Մահվան մահճում . . . . .	71
Թաղումը . . . . .	75

Ответ. редактор. Э. М. Гигоян

Тех. редактор Д. М. Джинибалаян

Обложка — работа художника И. Г. Филова


у полкрайлит № О-462. Сдано в набор 7 февраля 1937 г.

Подписано в печать 25 февраля 1937 г. Формат Б-5. Объем

2<sup>3/4</sup> листа. Тираж. 2000. Заказ № 277.

ԿԱՆԳՆԵՑՐԻ ԱԽՋԵՐԱԿԵՐԸ  
ՅԵՍ ՀՈՒՅԱՐՑՎԱՆ ԻՄ ՎԵՀ,  
ԶԻ ՄԱՍԻՆՈՒ ԴԵՊ ԱՅՆ ՏԱԼՈՂ  
ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՄՐԱՆ





ԳԻՒԸ 1 ԱՊՀԲ. 5297  
Цена 1 руб.

На армянском языке

В. ВЕРЕСАЕВ  
**ЖИЗНЬ ПУШКИНА**  
(Биографический очерк)

АЗОВО - ЧЕРНОМОРСКОЕ КРЕДОВОЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“  
Ростов н-Д, Ворошиловский пр. № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL 0329139

